



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7327

891.99

F-34

ՏՅԳ. 99 աշ
Բ-34

10

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Ի

ՊԱՐՏԻ ՊԱՆԴԻՏԻՆ

ՅՕՐԻՆԵԱԼ

88

Ի Մ. ՅՈՂԶԱՆՆԷՍ ԲԱՐԱԶԱՄԵԱՆԷ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԵՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՂԱՅԵԱՆ

1873

Printed in Turkey

2011

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆ

ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

3017 4 6



1377
39

13330-589

12003

Յ Ա Ռ Ա Ղ Ա Բ Ա Ն

Հայրենիք, ընտանիք, գաւաի, ասուք եւ մարդոս անկեւ-
սիրելի առարկաներն . պաշտե Հայրենիքը վասն զի ևս իրեն մայր
գորովայից կրեց զբեզ իոր ծոցին մեջ . սիրե քոն ընտանիքը . զի
ևս ոսոյց քեզ շարն ու յարին , եւ յոյս տոոր քոն զաւիիր , ին-
չոն որ քոն կեանքը և ևս եւ քոն փառքն :

Միւրելի եղբայր . երբ տիար մտքի մը երած այս գիրքը կիար-
դաս , շա մնամե թե ասիկայ գրողը երբեք ոչ դարոց զացած
եւ ոչ դասատոս տեսած միայն թե անոնց անուեր ըսած մեկն է ,
ևս իոր մանկութեան օրերուն մեջ Հայաստանի դաշտերուն վրայ
գաւ եւ ոչխար արածելով իոր սիրելի հօրմեկն ուսած է , ինչ որ
գիտե :

Պանդոխտ մ' եմ եւ ո՛վ հայ , այնպիսի պանդոխտ մը որ
թշուառութիւն , ցար , վիշտ միշտ ընկ պահած իմ վրային , քանի
քանի անգամներ Պոլիս եկած եւ անկի կրկին հայրենիք դարձած
եմ , եւ այս անսպարհորդութեանցս մեջ ցար երկիող կրած եւ
տեօթի աչ մեացած եմ , անտը դառն եղած է ինն համար , այն
ապրամիկի ընկերուն մեջին , հողմնչն անարկոս մեծխնները ,
ծրակին եւ փոթորիկն աստիճաններ , մեկ խօսքով ցորտին խոշ-
տութիւնը զմեզ մտնելոս աստիճանին հասոցած է , հետեւապար
ամեն գոյք , մի եռայն ընդ թողելով փախած ենք , ցաւային հոն
է որ անձնակաւ տիարութիւնն աչ անսպարհին մեջ վրայ հաս-
նելով զիս այնպիսի աստիճանի մը եւթմակայ ըրած է , որն որ իմ
ընտանիքս աչ եսս ըկարենայ տեսնելոս յուսահատութեան արուս-
տայից աքրելով գիշեր եւ ցերեկ խորին մնամնանց մեջ թաղոուս
եմ :

Է՛ն փառք Աստուծոյ ողորմութեան , որ գթաւով ինն անն
պանդոխտ եւ թշուառ հայոս մը ազատած է զիս այն ամեն տա-

նասյանքներեն, ուստի կարելի չէր ազատիլ . այժմ, եղբարք իմ . կողմն ձեզ ներկայացնել այն ամեն վշտերն ու տառապանքներն որոնք անցած են իմ գլխու, սոյն փոքրիկ գրկոյնս, աշխարհիկ շեզոտով եւ չարաւոր շանգերով շարադրեալ պիտի պատմե ընդ իմ վիճակն :

Եթէ ըսէք թէ հոգեւոր արտոնչիք ձիւյ մեջը եւ անպիտ քան մ'ե, ըսեմ ձեզ թէ երբ հոգեւոր ուսնելիք կողգք Աստուածաշունչ Մ. Գիրքը ձեզի բուսակն ե, ոչ թէ միայն ձեզ այլ եւ ընդհանուր տիեզերաց, իսկ եթէ ըսէք թէ մարմնաւոր ուսնելիք ձիւյ անոր համար ալ պիտի ըսեմ թէ այդ մասին խիստ շատ գրքեր կը գտնուին :

Տիրան, պանդոխտ եղբայրներ, այս գրքիս անշի ձեզ կ'ըստիպեմ որ մեկ մեկ հաս գնելով կարդար, զորս վստահ եմ թէ քիչ շատ օգտոտ պիտի քաղէք . գգոռչանալով այնպիսի դէպքերու մեջ որն որ երբեմն երբեմն կը հասնին մարդուս վրայ . իսկ Պօլսեցի եղբայրներ եւ ձեզմե կը խնդրեմ որ կարդար այս գիրքը ուր պիտի իմանար պանդոխտին թշուառութիւնքն եւ ցտեղն :

Տնորիս պարտականութեան մեկ մասը իմ խղձերս են, մեկ մասը վշտախուտ արկածներս . ուրեմն վստահ եմ թէ ամեն Հայ պիտի քաջաչերէ զիս այս ձեռնարկիս մեջ, գնելով անկէ մեկ մեկ հաստ, որով եւ ես ի վարդոց ոռնեցած փափաքիս հասած պիտի ըլլամ :

ՄԱՀՏԵՍԻ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՐԱՂԱՍԵԱՆ
ԻՋԵՄ

1875

ԲՂԵՑԻ

ԻՄ ԾՆՈՒՆԴՆ ԵՒ ԳԻՊՈՒԱԾՔ

Մեծ է Աստուած, հնազանդել նորա կամացը գիտցէք,
Նա կ'գթա միշտ Ձեր վրայ ուրեմն անոր յուսացէք .
Աշխարհիս մէջ որչափ մեծնաք այնչափ անկէ շատ վախցէք,
Նա միշտ բարիք կ'ուտայ մարդու դուք այս բանը լաւ գիտցէք .
Նա որ կուտայ կրնայ առնուլ այս տեղը քաջ խորհեցէք,
Ինծի տուաւ կրկին առաւ զիս օրինակ բռնեցէք :

Հիմայ պատմեմ ո՛ր եղբայրներ դիտուե եկած իմ դէպքեր,
Նախ Ձեզ կ'ըսեմ միտք պահեցէք Տէրոջ ուղիդ պատուէրներ .
Սուտ մի խօսիք զի կ'տեսնայ պմեն խորին իսկ սրտեր,
Երբ սուտ խօսիք կ'թափէ ձեր դիտոյն վրայ պատիժներ .
Նա ստեղծեց զՁեզ հողէն կ'կատարէ Ձեր կամքեր,
Ուրեմն ինչո՞ւ չար վարմունքով ըլլանք թշուառ եղբայրներ :

Ինչ որ եկեր է իմ դիտուե այն օրինակ ցուցուցի,
Մայրս ծնաւ աշխարհ բերաւ զիս երբ աչքերս բացի .
Հայրս հարուստ էր բարութեամբ ուրախ սրտով դորձեցի,
Նա կ'աշխատէր ինծի համար ուսմունք սորուել ջանացի .
Այլ այս փափաքս խիստ կարճ տեւեց լի արամամբ մնացի,
Իմ տարիքս տասն եւ չորս էր դէպի Պօլիս չուեցի :

Չորս տարիուկէս թափառեցայ հրէք ստակ չ'ըռնեցի,
Ձի Աստուծոյ չաղերսելով նորա պատուէրը չ'պահեցի .
Կարծես անէ՞ծ տուին Երկինք այսպէս պարապ անցուցի,
Ինչպէս ելայ ես իմ տունէն այնպէս թշուառ տուն գացի .
Հայրս, մայրս խորհուրդ ըրին ելան պարտքով կարդեցին,
Հինգ ամիսէն կրնս մեռաւ, ան ասանկ զիս խօցեցին :

Ո՛հ, թշուառ եմ երկիրնք ինձի ողորմէ,
 Իմ ցաւալի վիճակիս մհ, Տէր օգնէ:
 Զի հայրս նորէն զուրցեց կարգելը ինձմէ,
 Այս դժուար էր ինձ այլ հօրս կամքն է:

Ելաւ հայրս կրկին պարտքով կարգեց զիս,
 Մէկ տարիէն վերջը Պօլիս ղրկեց զիս.
 Քեզ տեսնեմ որդեակ չ'ամէջնես զիս,
 Աստուած ալ յաջողեց իմ բանիս գործիս:

Այս հեղ երկու տարի հազիւ մնացի,
 Պարտքս վճարելու ստակ ճարեցի.
 Անճանչ մարդոց հետ ալ կարին գնացի,
 Հոն դրացիքս տեսայ եւ շատ խնդացի:

Մտիկ ըրէք զայս չ'եմ կրնար ս՛ն պատմեր,
 Գլխուս եկած խիստ շատ դաւն փորձանքներ.
 Ժամ երթամ ըսի փոխեմ հանդերձներ,
 Բայց տեսէք իմ ցաւերս սրչափ դառն էր:

Բարձր ձայնով եւ արտասուօք պոռացի,
 Զի ստակս զողցեր էին ցաւրս ես անոնց լացի.
 Միրտս շատ կսկծաց լաթերս պատռեցի,
 Շատ բազմութիւն գլխուս փայ ժողվեցի:

Ինձի ինչ խրատ կուտաք սիրուն եղբայրներ,
 Սրտիս ցաւէն չ'եմ կրնար ոտքի կայնել.
 Ասոր մէջի ստակն ինչպէս են հաներ,
 Որո՛ւ երթամ եւ բողոքեմ այս ինչ էր:

Լաթերս հագցուցին գինետուն տարին,
 Նուկի մը օղի բերին խմէ զօր ըրին.
 Հող մի ըներ եւ վշտակցիք դու ըսին,
 Իմէ օղին սրտիդ ցաւերը փարատին:

Նուկի մը խմեցի ցաւս չ'մոռցայ,
 Իեղքս ցնորելով տասն օր հոն կեցայ.
 Գիշեր՝ցորէկ բնաւ երբէք չ'ջնացայ,
 Շատ մտածեցի ո՞վ գողցեր էր չ'գիտցայ:

Միտք ըրի որ նորէն դառնամ Պօլիս գամ,
 Ստակ չ'ունիմ ինչպէս ելլամ տուն երթամ.
 Բարեկամին մէկը ըսաւ ես կուտամ,
 Ըսի թէ ես պարտք ընկու կ'վախնամ:



[Faint, mostly illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]

ԵՐԿՐՍՇԱՐԺ ԿԱՐՆՈՅ

ՈՂԲ ԻՎԵՐՍ ԿԱՐՆ ԲԱՂԱԲԻ

Մեծ տխրութիւն վրաս գալով ինձի կրօնին քնացաւ,
Առջի աւուր պէս չ'երեւար գիտես թէ ցաւն մոռցաւ .
Սակայն աչքս բացի տեսայ քաղաքն ամբողջ սարսեցաւ,
Մարդիկ մէկզմէկ չ'էին տեսնար ցորեկը գիշեր դարձաւ .
Ամէն մարդիկ կը կանչվոտէր թէ աշխարհ կործանեցաւ,
Այս Աստուծոյ մէկ պատիժն էր եկաւ մեր վրայ հասաւ :

Հայաստանին մէջ մէկ հատ էիր հպարտութեամբ լեցուեցար,
Ողբամ զքեզ Կարին քաղաք դու Աստուծմէ չվախցար .
Ահա տուաւ պատիժ քեզի դու այսօր պատժուեցար,
Ես տասն օր աստ կվշտակցէի դու իմ ցաւս չիմացար .
Հպարտութեամբ գոռոզութեամբ մինչեւ երկինք բարձրացար,
Աւանդ քեզի Կարին քաղաք որ այսօր կործանեցար :

Աւանդ քեզի Կարին քաղաք դու Նինուէն չդիտեցիր,
Քուրձ հազնելով աղօթք չըրիր եւ երբէք ծոմ չպահեցիր .
Գիրկըդ եղող մեծ ու պղտիկ ամեն ալ դու լացուցիր,
Հպարտութեանդ յուսալով շատ զաւակ կորսնցուցիր .
Ուրախութեամբ ես կապրէի դու գիս կրկին ցաւցուցիր,
Հպարտներուն վերջը այս է ասի բնաւ չը խորհեցիր :

Սողոմ Գոմոր կործանելը դուն միաքըզ չպահեցիր,
Նինվէ Սողոմ քենէ հեռուն անոր համար չ'զգացիր .
Անի քաղաք քեզի մօտ էր ինչու օրինակ չառիր,
Քու հոյակապ պալատներդ դուն այսօր կործանեցիր .
Հայաստանին յոյսն դուն էիր քու վիճակիդ լացուցիր,
Քու մէջ եղած փայլուն զարդերդ դու այսօր կորսնցուցիր :

Վան գեղեցիկ ամառան տեղ ձմեռն հասաւ քու վրադ,
Այսօր քեզի ինչ որ եղան ուրեմն ըլլան թող քեզ խրատ .
Ահ գիտնաս հպարտ Կարին թէ վերքերդ են խիստ շատ,
Պիտի ջանաս անչուշտ չըլլալ այդպէս տխուր յուսանաւ .
Կերեւայ թէ քաղաքներուն մէջ միակ էր դու հպարտ,
Ահա այսչափ կը ցաւիմ քեզ չը լսեցի մէկ մեղայդ :

Ողբամ քեզի Կարին քաղաք զի շատ մարդոց ցաւ տուիր,
Քու հոյակապ պալատներդ այսօր փոշի դարձուցիր .
Եւ քու անթիւ աւերակաց տակ աննշան ծածկեցիր,
Հազար եւ չորս հարիւր մարդիկ այսօր հողը թաղեցիր .
Կերեւայ թէ սիրադ էր քար որ այս ցաւերն չզգացիր,
Ասկէ վերջը Կարին քաղաք դու Աստուծմէ խիստ վախցիր :

Կարնոյ մէջի որոտումը ձեզի չեմ կարող պատմել,
Աշխարհ ամեն կործանեցաւ կրօնին գեղ ու քաղաքներ .
Ամեն մարդոց սիրան ի դող եւ ունեցան սարսափներ,
Կարնոյ մէջէն փախան գացին դէպի գերեզմանոցներ .
Եւ զաւակնին փնտռելով թափէին աղի արցունքներ,
Ողորմութիւն Աստուծմէ գայ բանայ կրօնին իւր դասեր :

Այս Աստուծոյ մէկ պատիժն էր դուք մաքերնիդ պահեցէք,
Այս դրածս օրինակ է միտք պահելով կարդացէք .
Մինչեւ հիմայ մեղք գործեր էք անոր վրայ զղջացէք,
Աշխարհի մէջ ամէն ատեն Յիսուս իրկիլ օրհնեցէք .
Ձեր սրտերը խիստ մաքրութեամբ դուք Աստուծոյ յանձնեցէք,
Ընթերցողներ իմ գրածս ամէն մարդու պատմեցէք :

1858 Մայիս

(Աւանդ քեզի Կարին քաղաք դու Նինուէն չդիտեցիր,
Քուրձ հազնելով աղօթք չըրիր եւ երբէք ծոմ չպահեցիր) :

Մեր սրտերն ամենքն ի մի միայն տէրոջ յանձնեցինք,
Եւ արտորնօք ահուդողիւ ելանք փախանք ու գացինք .

Փառք Լատով միշտ Աստուծոյ որ ողջ առողջ մնացինք ,
Կարնոյ եղած արկածքները ուր որ գացինք պատմեցինք ,
Ես իմ անբոյժ ցաւս մոռցայ Կարնոյ ցաւը իմացուցինք ,
Երեք աւուր միջոցի մէջ գացի հասայ հայրենիք :

Ո՛հ եղբայրներ իմ երեսս Ղազարոսին պէս չինդաց ,
Հազար զուրուչ պահ տուած էին տէրերնուն եղաւ իմաց .

Ինծի հարցուցին թէ մեզի քանի զուրուչ ես բերած ,
Ես ալ ըսի իմ եղբայրներ ձեր ստակը կորուսած .

Որչափ որ ճշմարիտ ըսի անոնցմէ մէկը չ'աւտաց ,
Կը մտածէի ոչ ճար չ'կար բանը Պօլիս երթալ մնաց :

Սիրտ առնելով ինքնիրմէս զիս Աստուծոյ յանձնեցի ,
Ինծի համար աղօթք ըրէք ըսի ճամբայ քայլեցի .

Քիչ առնէն Պօլիս հասայ դառն քրտինք թափեցի ,
Ամեն պարտքերս վճարելով Երուսաղէմ ալ գացի .

Հազար եւ ութը հարիւր վաթսուն երեք թիւն գրեցի ,
Ձեռքերս երկինք բառնալով Աստուծոյ փառք մատուցի :

Կարողացայ չար թշնամին եւ սատանան յաղթելու ,
Սուրբ Յարութիւն տեսնելէն վերջ ելանք Պօլիս երթալու .

Նամակ գրեմ ըսի երկիր հօրս աւետիս տալու ,
Թէ հոգ մընէք շատ չմնաց միտք ունիմ երկիր գալու .

Իրտ աւելի փափաք ունիմ հիմա ես ձեզ տեսնալու ,
Աղօթք ըրէք Հօր Աստուծոյ արժան ըլլանք խնդալու :

Այսպէս անա նաւը նստանք 12 ընկերներով .
Միշտ իմ սիրտս կը բաբախէր առջի ցաւս խորհելով .

Տրապիզոնէն ճամբայ ելանք երկու ջորեպաններով ,
Մինչեւ 'ի գիւղ մեզ տանելու զի ասանկ պայմաններով .

Եւ Երզնկայ երթալուս պէս անդին չենք գար ըսելով ,
Դէմ կայնեցանք դատ վարեցինք հոն տեղ քանի օրերով :

Կրտսին մեզ գացած չունինք նոյն ճամբայէն կը վախնանք ,
Գիշերները ջորիներնիս արածելու ուր երթանք .

Մենք ալ ընինք ուր տեղ որ ջուր եւ արածելիք գտնանք ,
Հոն թափելու եւ կենալու ձեզի հաստատ խօսք կուտանք ,
Տասներկու օր այսպէս հազիւ ասոնք համոզել կրցանք ,
Ուրեմն բերին ջորիներն ամենս ելանք հեծանք :

Ամէն կողմէն վախն կը տիրէր ճամբայ ելանք ու գացինք ,
Մեր պայմանը չմոռնալով Աւզատ լեռը մնացինք .

Գիշերները ցուրտ ըլլալով հոն տեղ կրակ վառեցինք ,
Մեր գոյքերը պարսպի պէս կրակին շուրջը շարեցինք .

Մի քնանաք արթուն կացէք , իրարու պատուիրեցինք ,
Քիւրտերն եկեր կողոպտելու այս բանը չզիտացինք :

(Վերադարձ և ցումի շէշուծ 1865 թայէն)

Սարսափելի տեսարան մը եկաւ մեր վրայ հասաւ ,
Երկու հրացան նետուեցաւ իմ ոտքիս զարնուեցաւ .

Տուն երթալու ուրախութիւնս հիմայ տրամու թեան դարձաւ ,
Այս փորձանքը եղածին պէս մեր միութիւնը քակուեցաւ .

Չափէն աւելի կսկծացինք Աստուած ալ չողորմեցաւ ,
Ամենքս ալ լացինք պոռացինք թէ Աստուած մեզի մոռցաւ :

Պոռալուս պէս ընկերներս ամենքն ալ փախան գացին ,
Սիրտը ցաւող երկու հոգի դարձան քովս մնացին .

Քիւրտերն եկան բաներուն քով մեր վրայ թուր քաշեցին ,
Ընկերնուս մէկը դէմ կենալով թեւին թուրով զարկեցին .

Աս տեսնելով մենք ալ փախանք Քիւրտերն հոն մնացին ,
Միւս օրը լաւ հասկըցանք որ բեռ մը ստին գացին :

Իմացանք որ մօտ գիւղ մը կայ արտոգրանք խապար տալու ,
Իրտ վաղեցինք շատ հոգնեցանք այս գիւղը փնտռելու .

Կէս գիշեր էր ժամն ալ վեց էր յոյս չկար լուսանալու ,
Առաջ գացինք ականջ դրինք չուն մը չկար հաշելու .

Հոն նստեցանք եւ շատ վախցանք գազանէն փարատուելու ,
Ամէն տեղէն յոյս կտրեցինք դարձանք երկինք նայելու :

Բօսայինսօնէն վար չմնաց շատ չարչարանք քաշեցի ,
 Ընկերներս ելան գացին ես հոն մինակ մնացի .
 Զանք ըրի որ ես ալ երթամ բայց անոնց հետ չկրցի ,
 Քանի տաք էր ցաւ չիմացայ մինչեւ հոն տեղ վազեցի .
 Շատ կը ցաւեր չէի դիմանար վէրքս որ պաղեցուցի ,
 Ուրիշ բան մը ձեռքէս չի գար հոն տեղ նստեցայ լացի :

Սարսափելի դժբաղդ գիշեր իմ վրայ եկաւ հասաւ ,
 Ես չեմ կրնար ցաւս պատմել սրտիս ալ զարնուեցաւ .
 Վէրքս պաղած անդամալոյծի պէս ոտքս քաշուեցաւ ,
 Աս վիճակին մէջ տեսնալով ամէն յոյսս կտրեցաւ .
 Ամէն կողմէ վախ տիրելով աչքերս չքնացաւ ,
 Մարդ չէր գիտեր իմ վիճակս միայն թէ Աստուած գիտցաւ :

Վեր վերցուցի իմ աչքերս հօր Աստուծոյ կանչելու ,
 Ցաւս սաստիկ ոտքս քաշուած սիրտ չունիմ աղօթելու .
 Ով Աստուած իմ դու կը տեսնես հրեշտակ խրկէ օգնելու ,
 Քեզնէ ուրիշ յոյս մը չունիմ դու կարող ես հասնելու .
 Անտառին մէջ շատ գազան կայ կ'վախնամ փարատելու ,
 Ինտ թշուառ եմ եթէ կամիս կարող ես աղատելու .

Տէր իմ գթած դու ողջ պահէ տեսնեմ սիրուն որդեակս ,
 Պիտի մեռնիմ ալ չը տեսնեմ իմ մէկ հատիկ եղբայրս .
 Ամէն լըսող չի գիմանար երբոր գիտնան վիճակս ,
 Դժբախտ ժամեր ինձի ծնաւ աշխարհ բերաւ մայրիկս ,
 Շատ կը ցաւի չը գիմանար իմ ծերունի հայրիկս ,
 Թող մէկտեղ գան երեք քոյրեր հետ առնեն ընտանիքս :

Անվայերիք անտառի մէջ ես մինաւոր նստիր եմ ,
 Թուղթ եւ թանաք չըկայ քովս վիճակս ձեզի գրեմ .
 Ես թեւ չունիմ ինչպէս թուչիմ որ ձեզի լուր մը խրկեմ ,
 Ոտքս չբռներ ելլեմ կայսիմ հոս տեղը չը համբերեմ .
 Թռչունները շատ կը խօսին լոյսը մօտ է գիտցեր եմ ,
 Անուշ ձայնով ինձ կը կանչեն գիտեն որ քնացեր եմ :

Հարցունեմ քեզի դժբախտ հայրիկ դուն բարի օր տեսեր ես ,
 Հրացան զարկին ես կը մեռնիմ դուն հանգիստ գնացեր ես .
 Լոյսը մօտ է չեմ գիտեր թէ արդեօք արթնցեր ես ,
 Լուր մը տուող չեղաւ քեզի որդիդ կորսնցուցեր ես .
 Դուն ել լուր տուր եւ հետդ առ իմ սիրելի դրացներս ,
 Անվայերիք անտառին մէջ ինտոր պիտի փնտռես :

Ամեն ատեն երնէկ կուտամ թեւաւոր թռչուններուն ,
 Ես ունենայի թռչէի ու գայի կը հանդէլի մեր տուներուն .
 Ես ձեզ տեսնէի դուք զիս տեսնէիք կը հասնէիք փափազներուն ,
 Իս ողջ տեսնէիք թող հող չընէիք իմ հետ եղած բաներուն .
 Թող ամեն մարդ յոյս չը դնէ թուլասիրտ ընկերներուն ,
 Խեղճ վիճակի մէջ մնացի չեմ հոգար դրամներուն :

Սիրոյն եղբայր քեզի կըսեմ եկուր բռնէ իմ թեւէս ,
 Ծնած օրէս չար սաստանան միշտ կը վազէ ետեւէս .
 Գէշ վիճակի մէջ ձգելով չի թողուր որ տեսնեմ քեզ ,
 Զարժանացայ օրհնենք մ'առնել իմին ծերունի հօրմէս .
 Դուք խապար չէք եւ ուրախ էք կը վկայեմ ինքրիմէս ,
 Ես կը մեռնիմ դու համբուրէ եւ օրհնենք առ իմ կողմէս :

Ինտ կաղաչեմ իմ մօրկանս որ ինձի դիեցուցեր ,
 Ծնորհակալ եմ ամեն կերպով որ պահեր զիս մեծցուցեր .
 Թող օրհնենք տայ իւր որդւոյն որ այսօր կորսնցուցեր ,
 Ինք չգիտէր պիտի լսէ որ ձեռքէն թռչունը թռուցեր .
 Ընկերներուս պիտի հարցունէ թէ որդեակս ուր մնացեր ,
 Իմ վիճակս երբ հասկընայ պիտի թափէ արցունքներ :

Ահա լուսցաւ ով թռչուններ իմ լուրս առէք գացէք ,
 Ինչ որ եզեր իմ վիճակս հօրս մօրս պատմեցէք .
 Եղբայրս ձեր հետ առէք եկէք զիս բնտեցէք ,
 Կը մեռնիմ ես ալ չեմ տեսներ խիստ արտորնօք գալեցէք .
 Ես մինակ եմ ալ մարդ չունիմ ինձի բարեկամ դուք էք ,
 Ցաւս շատ է սիրտս կտորած տէր Աստուծոյ կանչեցէք :

Ես ալ ելայ երեսս ի քարչ ծոռնկիս վրայ քալեցի,
 Դէպի դարձուվար անտառներէն ինքզինքս աղատեցի:
 Չոր մը իջայ դէպի դարվեր ես չը կրցայ քալեցի,
 Ինտոր ընեմ ես ուր երթամ հոն նստայ մտածեցի:
 Ուրիչ տեղէ ալ յոյս չըկար ես իմ տէրս կանչեցի,
 Ընկերներս զիս փնտռել ես աս բանս չը յուսացի:

Թուփի վրայ գլը գրեցի թռչուններն առին դացին,
 Ընկերներս զիս փնտռելով մէկէն ի մէկ պօռացին:
 Չայն տալուս պէս իմ քով դալու խիստ էվելօք արտորացին,
 Իմ վիճակս դէչ տեսնելով նստան իմ քովս լացին:
 Ինչպէս ըրիւ մինակ հոս տեղ մէկիկ մէկիկ հարցուցին,
 Ամեն բանը պատմելէն վերջը Աստուծոյ փառք մատուցին:

Ելլէնք երթանք բաներուն քով իմին սիրուն ընկերներ ,
 Ոտքս քաշուած շատ կ'ցաւի ոտքի չեմ կրնար կայներ:
 Ուրիչ կերպով ես չկրցայ ելայ անոնց շալակներ ,
 Ելանք գացինք բաներուն քով գտանք միւս ընկերներ:
 Ամեն կերպով լաւ հասկցանք որու բաներն են տարեր ,
 Ամեն ընկեր մէկ տեղ եկանք չկային չորեպաններ:

Վերջէն եկան մեզի ըսին բեռցէք երթանք Երզնկան ,
 Յառաջմանէ ձեզի ըսինք աս ճամբայէն խիստ վախ կան:
 Ընկերներս խորհուրդ ըրին որ Երզնկայ թէ չերթան ,
 Երկու ջորի առաւ փախաւ դնաց եւ մէկ ջորեպան:
 Մէկը մնաց չորս ջորիով ելան բռնութեամբ բեռցան ,
 Չորիները լըման եկաւ ինչու որ բեռ մը գողցան:

Իմ ստակով ձի առեր էի ըսին վրան կապեցէք ,
 Անցնող դարձող վէրքս տեսան ըսին աղէկ նայեցէք:
 Ուր տեղ երթաք ամեն իրկուն մէկ մէկ հատ դառ կ'օրեցէք,
 Վէրքը պաղեր ուռեցեր է մորթին տաք տաք կապեցէք:
 Հիւսէն պէյը կը կատարէ դուք անոր շիտակ գացէք ,
 Հոն տեղերուն դու կը փրկես ըսէք օձիքէն բռնեցէք:

Ես բորբոս շատ նայեցայ չըկար խօսող թռչուններ ,
 Ամենը ելան դացին հօրս առին տրտմութիւններ:
 Գժբախտութեան խիստ կը ցաւիք զաւակ ծնանող մայրեր ,
 Ես չեմ մեռեր քեզի կուգամ ինչու թափես արցունքներ:
 Ընկերներուս կաղաչէի կամաց գացէք եղբայրներ ,
 Զին վրայ չեմ դիմանար ես եղեր եմ կէս մեռել:

Պալատը գացինք Հիւսէն պէյին եկաւ իմ վերքս աեռաւ,
 Թէ ճար չկայ աս կ'մեռնի իմ ընկերներուս ըսաւ:
 Մէկիկ մէկիկ կը հարցունէր ուր տեղ էր դարնուեցաւ ,
 Գիր առնելով մէկ ընկերնէս անկէ Երզնկայ դարձաւ:
 Ամէն իրիկուն մէկմէկ հատ դառն իմ վերքիս կտրովեցաւ ,
 Վրան կապելով տաքութենէն ոտքս քիչ մը բացուեցաւ:

Աղէկ բժիշկ Հիւսէն պէյի գիւղէն հետս բերեցինք ,
 Որականը հոն տեղ հետը ամեն կերպով պարզեցինք:
 Չար լուրեր առնուեցաւ գիւղ եւ քաղաք սարսեցինք ,
 Բժիշկը հետս ելանք ճամբայ մեր քաղաքը գնացինք:
 Հայ եւ Տաճիկ մեծ ու պզտիկ գլխուս վրայ ժողովեցինք ,
 Խիստ խղճալի մեր վիճակը ամէն կերպով պատմեցինք:

Շատ բազմութիւն հետս գալով կառավարութեան գացինք ,
 Վէրքս տեսան ամեն կերպով տեղն ի տեղը գրեցինք:
 Մարդ հանելով Երզնկա Էտէմ փաշային խրկեցինք ,
 Անկէ վերջը տուն երթալու խիստ էվէլ արտորացինք:
 Շատ դրացի եկան դէմս եղբայրս ուր է հարցուցինք ,
 Ըսին ձեր տուն լուր չտուինք քու վրադ դէչ լսեցինք:

Ինձի սիրող բարեկամներ ամենը դէմս եկան ,
 Ըսին գիւղը մեծ ու պզտիկ ամենը գացին Օպան:
 Տունս գացի հայրս տեսայ արժան եղայ օրհնութեան ,
 Սանս դնաց Օպանները կըսէր շատ իրար անցան:
 Սանս ըսաւ անհող եղէք հրեշտակ հատեր օգնութեան ,
 Դուք Աստուծոյ փառք տուէք որ թող հեռանայ սատանան:

Նշքայրս եկաւ մայրս ալ հետը զիս սիրով համբուրեցին և
 Բժիշկն ելաւ դառը մորթեց մորթն ոտքիս քաշեցին :
 Անն ու մեղրը դարման շինեց վերքիս մէջը կոխեցին ,
 Իխտ կ'ցաւեր չ'զիմացայ զիտցայ թէ զիս մեռուցին .
 Տասն երկու օր իս անըսթաի իբր մեռեալ ծածկեցին ,
 Իմ վիճակս դէշ տեսնելով բոլոր բարեկամք լացին :

Աչքս բացի վեր նայեցայ ըսին տասն երկու օրեր ,
 Քաջ բժիշկը քովս նստած ամէն դարման կը շինէր .
 Հօրս մօրս շատ սիրտ կուտար ես կըսէի թէ չեմ մեռեր ,
 Բնաւ երբէք վախ մը չկայ ինչո՞ւ դուք չէք համբերէր .
 Ամիս ու կէս ընտանիքս եւ դուստկս չեմ տեսեր ,
 Քաջ բժիշկը չ'թողուց որ չիգան չտան մխասներ :

Երկու ընկեր ամիսուկէս Երզնկայ դատ վարեցին ,
 Քիւրաբերու տուներն երթալով մեռցնելու շատ վախցին :
 Մէկ աւազակը բռնելով ընչից կէսը հանեցին ,
 Մէկ ալ կէսին աշխատեցան բայց հանելու չ'կրցին .
 Ամիսուկէս հոն տեղերը խիստ խեղճութիւն քաշեցին ,
 Իմ վեց ոսկին գողցեր էին մէկ դօսի մը բերեցին :

Աշխարհի մէջ դժբաղդութեամբ պարապ օրեր անցուցի ,
 Ո՛վ սիրելի ընթերցողներ ձեր գլուխը ցաւցուցի .
 Յաւս խիստ էր շատ խօսեցայ սրտերնիդ նեղացուցի ,
 Այս խօսքերով ազէկ գիտցէք ձեզնէ ներուժ ինդրեցի .
 Իմ Յիսուսի չնորհիւն էր ասոնք որ ես դուրցեցի ,
 Ահա տունս եմ եւ առողջ եմ Աստուծոյ փառք մատուցի :



Վ Ի Շ Տ Ք Ի Մ

Յ Ե Ր Ե Ս Ս Ա Յ Վ Ա Ս Ս Ա Կ Ե Ղ Ի Ա Ր Ց

1872 Սեպտեմբեր 20


Մեր երկիրը կը գտնուի խիստ քարեսիրտ հարուստներ ,
 Հասարակաց ամեն ատեն տուած են շարչարանքներ .
 Վեց ամիսէն վերջը եկան երկու հազար Զէրքէզներ ,
 Ամէն վասակ գիւղեր ինկաւ ժողվեն եզներ ջորիներ .
 Այս անուէնով աղքատներէն կողոպտեցին ըստակներ ,
 Տէրութեան տուրք ալ ժողվեն այս է իրենց արհեստներ :

Ես եղելութեան նայելով համբերելու չկրցի ,
 Նոյն միջոցին ջորի առնեմ ելայ Կարին գնացի .
 Մեր գիւղերուն աղմուկները միտքս ազէկ պահեցի ,
 Իմին սիրտս չզիմացաւ դէպի Պօլիս քալեցի .
 Երկու տարի հաղիւ կեցայ նորէն ըստակ ձարեցի ,
 Այս անգամ ալ դացի Կարին հոն տեղ խանութ բռնեցի :

Մեր երկրին քաշածները ձեզ պատմելու չեմ կրնար ,
 Եգիպտոս ինչ քաշեցին անկէ ալ վար չմտար .
 Հայրս եկաւ զիս տանելու իրեն ըսի չեմ իզար ,
 Հայրս գնաց խորհուրդ ըրաւ մայրս ելաւ պիտի դար .
 Մէկէն Ի մէկ կը հիւանդնայ զիր գրեց ինծի համար ,
 Թէ կը մեռնիմ դուն շուտ եկուր իմ հոգս քեզի համար :

Կարնոյ մէջը ութամիս հանգիստ կեանք անցուցի ,
 Մօրս կակիծը տեսնելով համբերելու չկրցի .
 Խանութին մէջի եղածներն հետս առի տուն գացի ,
 Մեր գիւղերուն դէշ վիճակը ձեզի յառաջ պատմեցի .
 Հինգ տարի երկիր կենայով դժբաղդ կեանք մը անցուցի ,
 Շատ բան տեսայ բայց ամենը հոս յիշելու չուզեցի :

13330-58



Էջմիածին ուխտ ընելով ելանք վեց հոգի գացինք ,
 կաթնուղիկոսը տեսնելով իւր աջը համբուրեցինք .
 Ռուսի գիւղերը չըջելով ամենքս ալ չ'սիրեցինք ,
 Խարս եւ Փասէն կարնոյ դաշտը խիստ շատ պտըտեցինք .
 Փասէն անոյշ տեղեր շատ կայ ամենքս ալ հոն սիրեցինք ,
 Շատ ցանկացանք Փասէն երթալ բարեկամ եւ դրացին :

Անի քաղաք պտըտելով դարձանք տուներնիս եկանք ,
 Մեր երթալուն բուն պատճառը ինձի գտեր էին յանցանք .
 Քչնամիներս խորհուրդ ըրին օր մը աղէկ ծեծ մը տանք ,
 Օր մը ինձ պիտի ծեծէին մենք վախերնուս պահուրտանք .
 Չիս չէին գտեր հայրս էին ծեծեր եկանք զանի հիւանդ դտանք ,
 Երկու եղբայր խորհուրդ ըրինք տեղ մը գտնալու երթանք :

Գացինք Փասէն պտըտեցինք յարմար տեղ մը գտնելու ,
 Հոն սրտերնիս չ'սիրելով դարձանք կարին նայելու .
 կարնոյ դաշտը պտըտելով տեղ մը գտանք սիրելու .
 Դրացները խիստ հաճեցան մեզ հոն տեղ ընդունելու .
 Այն մարդոցը խօսք տրվինք որ տուներնիս հոն բերելու ,
 Մեր երկիրը ցաւեր շատ կան չենք կրնար համբերելու :

Տասն եւ հինգ օր պտըտելով ելանք տուներնիս գացինք ,
 Հօրս ըսինք դաղթելու ենք ամեն բան պատրաստեցինք .
 Գիշերն եկան շատ բազմութիւն բարեկամ եւ դրացիք ,
 Ամենն ալ ցաւ ունինք ըսին հիմայ տեղերնիդ կեցիք :
 Յաւերնուս վերջը առնել ամենքս մէկտեղ խորհեցինք ,
 Միութիւն մը կապուելու գիր գրելով կ'ըրեցինք :

Ամեն գիւղեր մէկտեղ եկանք մեր ցաւերը գրեցինք ,
 Մարդ հանելով Պօլսոյ եղած եղբայրներուն խրկեցինք .
 Պօլսէն մեզի գրեր եկաւ մէկտեղ եկանք կարդացինք .
 Հրովարտակ հանելով չորս մարդ առին կարին եկան լսեցինք .
 Հասարակաց խորհրդովք առաջնորդով կարին գացինք ,
 Հինգ ամիս հոն կենալով ցաւերնուս դատ վարեցինք :

ՎՇՏԱԼԻՑ ԲԱՆՏՆ ԻՄ

ՅԵՐԵՍՍԱՅ ՎԱՍՍԱԿ ԵՂԲԱՐՅ

1872 Յունվար 21

Քչնամիներս ինձի համար տեղեկագիր գրեցին ,
 Սուտ խօսքերով հաստատեցին կարնոյ փաշային խրկեցին .
 Չիս կանչելով տեղեկագիրն իմ առաջս կարդացին ,
 Ամէն մարդիկ դուն ես հաներ ոտքի վրայ զուրցեցին .
 Չարմանալի վարպետութեամբ ճամբաներ մտածեցին ,
 Ամէն յանցանք քուկդ ըսելով զիս տարին բանտարկեցին :

Ընկերներս ըննիչներով մեր գիւղերը խրկեցին ,
 Բանտի մէջի եղբները ինձի կերպ կերպ տանջեցին .
 Յանցանքս շատ եղածի պէս ներքին բանտը նետեցին ,
 Մարդ տեսնալը անհնար էր մէկը քովս չթողուցին .
 Յանցանքդ ինչ է որ եկար հոս ինձի եկան հարցուցին ,
 Չէի գիտեր իմ յանցանքս ինձի ալ չգիտցուցին :

Բանտին մէջը տասը տարի կամ աւելի կեցող կան ,
 Տանջանք կուտան նոր երթողին պատճառը անօթութեան .
 Ծուխ ալ կուղեն կերակուր ալ որ անանիով կշտանան ,
 Բանի քովս ստակ կարնէ տուի անոնք ալ կերան .
 Դժբաղդ վիճակ եկաւ վրաս հասաւ քովիս դառեկան ,
 Ծուռ նստեր ես ինձի կրսն կը տանջէին անխաբան :

Ո՛վ Աստուած իմ մի թողուր զիս գայլերը կը փարատեն ,
 Միտքս կուգայ երեք մանկունք եւ Դանիէլ մարդարէն .
 Որ Տէրովմէն պարզեա առին հարիւրապատիկ փոխարէն ,
 Տէր Աստուած իմ ինձի ալ տուր քու անհուն գանձատունէն .
 Աղէկ միթիպրանք ունիս ես Յովսէփ գեղեցիկէն .
 Համբերութեան օրինակ մը առնեմ Յոյ երանելիէն :

Ահա իմին գէշ վիճակս եղբօրս ալ իմացուցին ,
 Հայրս մայրս մէկ տեղ գալով ընտանիքս լացուցին .
 Իմ վիճակիս խիստ ցաւելով ընկերս հիվանդացուցին ,
 Այս վիճակիս դուք էք պատճառ գիւղացի եւ դրացին .
 Միրտը ցաւով մէկ քանի հատ մէկզմէկու կանչեցին ,
 Բանտին մէջ անօթի էի քանի մը դրամ խրկեցին :

Տասն եւ հինգ օր լման եղաւ Փաշան զիս դէմը կանչեց ,
 Յանցանքդ շատ է ըսաւ պիտի կենաս զրուցեց .
 Ոչինչ բաներ հարցնելով նորէն զիս բանտը խրկեց ,
 Աստուած ինձի ողորմելով բարի մէկուն զիս յանձնեց .
 Երկու առտու զիս պահելու հաց եւ կերակուր խրկեց ,
 Բնիկ Քղեցի ըլլալով Մանուկ եղբայր զիս պահեց :

Գիր գրեցի գիւղ խրկեցի դուք դատերնիդ լաւ վարէք ,
 Քննիչները հոտ տեղ եկան դուք միաբան ընկերէք .
 Տեղս դժուար հանգիստ կըլլամ եթէ խօսքերնուդ տէր էք ,
 Դուք կսէիք թէ ցաւ շատ ունինք հիմայ դուք յառաջ տարէք .
 Հօրս գրեցի կը փափաքիմ գաւակներս ինձի բերէք ,
 Յանձանքս մեծ շատ պիտի կենամ հարկաւ դուք ալ լսերէք :

Թշուառ վիճակս գրեցի տուի Պօլիս խրկեցին ,
 Պօլիս եղած եղբայրները մէկ տեղ Հայրիկին գացին .
 Յարութիւն սրբազանին երկու հեռագիր քաշեցին ,
 Իր հետ առաւ Խան էֆէնտին կառավարութեան գացին .
 Ինձի համար ազատելու ջանք ըրին աղաչեցին ,
 Երեք տարի պիտի կենայ ըսին ու չթողուցին :

Ով եղբայրներ իմ վիշտերս ինչպէս պատմեմ ես ձեզի ,
 Հայրս մայրս կուլային ու կսէին ինչ փորձանք եկաւ մեզի .
 Թշնամիներս համարձակ կսէին ծիս ըլլայ քեզի ,
 Բանտին մէջի բանտապետները կսէին ինչ կուտաս մեզի .
 Դուրսէն մեզի պատուէր կուտան որ շարչարանք տանք քեզի ,
 Ստակ չունիմ ըսի քովս վերարկուս գրաւ ձեզի :

Հայրս ինկաւ առգին անդին տեղեկագիր շինեցին ,
 Թագաւորին նստած օրը եկաւ իր տարեդարձին .
 Սակաւ յանձանք ունեցողներ քսան հոգի հաշուեցին ,
 Յ. սրբազանին ջանքովը զիս անոնց հետ գրեցին .
 Երկու ոսկի ինձմէ առին վերարկուս ալ ետ տուին ,
 Քառսուն երեք օր բանտ կեցայ անանկ զիս դուրս հանեցին :

Մարդ դրին հետս երկու ոսկի պարտք ըրի վճարեցի ,
 Սրբազանին երթալով իմ երախտիքս մատուցի .
 Միւս օրը հայրս կուգայ կըսէ տղադ հանեցի ,
 Եկաւ քովս իրար տեսանք նստայ հոն տեղը լացի .
 Տունն ինչպէս են եւ ինչ կընեն ամէն կերպով հարցուցի ,
 Հարսը հիվանդ է կը մեռնի որ ըսաւ շատ կսկըծացի :

Հայրս ըսաւ ելիր երթանք քու ընտանիքդ տես ,
 Ես տէր եմ ամէն կերպով որչափ որ պարտք ըրեր ես ,
 Արտ կծախեմ ջորի եւ ձի քու պարտքերդ կուտամ ես ,
 Հարսը հիվանդ է կը մեռնի կը կսկըծայ տեսնայ քեզ .
 Ես չեմ ի գար ըսի հօրս կը խնդան թշնամիներս ,
 Անոնց խնդալ եւ ձեր լացը չեմ ուզեր տեսնել ես :

Հայրս ելաւ պիտի երթար Կարինէն դուրս հանեցինք ,
 Ինք իմ ճիտս ես իր ոտքը ինկանք ու համբուրեցինք .
 Անկէ էվէլ ցաւ տեսած չէի որ մէկզմէկ ցաւուցինք ,
 Աչքերնուս արցունք թափելով խիստ էվէլ կսկծացինք .
 Այնչափ սրտերնիս լեցուած էր որ բան մը խօսել չկրցինք ,
 Մէկզմէկէ բաժնուելով դարձանք երկինք նայեցինք :

Սրտիս մէջը թանակ դարկած հօրմէս գատուեցայ գացի ,
 Ամեն պարտքերս հաշիւ ըրի 15 ոսկի գրեցի .
 Միւս օրը ճամբայ ելայ դէպ ի Պօլիս գաղթեցի ,
 Պօլիս եկայ ամսէ մը վերջ գիր եկաւ ինձ կարդացի .
 Հայրս ինձի գրեր էր թէ կինդ մեռաւ ողջ կեցի ,
 Ամէն փորձանք միաք բերելով Աստուծոյ փառք մատուցի :

(Կարենի Պօլիս բաւ յոսէ . 20)

Հինգ անգամ է Պօլիս կուգամ երթալ գալլ զժուար է ,
 Ով որ ուզէ իս տեսնելու օթեւանս Իւսկիւտար է .
 Ահա հիմայ կը պըտըտիմ արհեստս խոհարար է ,
 Պանդուխտ երկիր ծառայ ըլլալ ինձի հարցէք ինտոր է ,
 Շիտակ մարդը պատիւ չունի կը վկայեն շատերը .
 Ով ծառաներ աղօթք ըրէք որ ազատէ մեր տէրը :

Իմ տարիքս քառասունն անցաւ ամեն բանը դատարկ է ,
 Աս տեսարակը երբ կը կարդանք գիտցէք ինձի կտակ է .
 Եթէ աղէկ մտադիր ըլլաք այս ձեզի օրինակ է ,
 Աշխարհիս մէջ սուս բաները մարդիկ պիտի խորտակէ ,
 Ով որ սրտով աղօթք ընէ Աստուծոյ աղաղակէ ,
 Ամեն չարէն ազատ կըլլայ Տէրը նա պիտի փրկէ :

Ահա եկայ այս աշխարհս խիստ ունայն պտըտեցի ,
 Մինչեւ հիմա ինչ որ տեսայ շատէն քիչը գրեցի .
 Ասկէ վերջը ինչ պիտի տեսնամ ես գիտնալու չկրցի ,
 Այսչափ գիտեմ որ հիմայ լաւ փրկիչս փնտռեցի .
 Իր գթութեանը յուսալով իմ մեղքերուս զըջացի ,
 Ինք ալ ինձի չնորհք տուաւ այս տեսարակը գրեցի :



Վ Ե Ր Չ Ա Ք Ա Ն

Սմենակարողն Աստուած երբոր կամեցաւ , երկինք
 և երկիր ստեղծեց . ամեն կերպով զարդարեց անայ
 սուններով և թռչուններով , բայց երբոր մեր նախա
 հայրն Ադամ ստեղծեց հրաման ըրաւ որ խշխէ նոյն
 գաղաններուն և անասուններուն վրայ մէկ կերպով
 նայինք ինչպէս որ մարդը աչք , բերան , ձեռք , ոտք
 և այլն ունի , անանկ ալ շատ անասուններ ունին . բայց
 ինչպէս որ մարդս խելք , միտք , բանականութիւն և
 զգացում ունի , անասունները այս սրբագեւը չունին
 Արարչէն Ասոր համար ամեն ասեն մարդուս պարտքն
 է որ մտածէ թէ եթէ Տէրովը հրամանը չըլլար նէ ,
 գոմէշը , ձին և ասոնց պէս զօրեղ անասունները մե
 զի հնազանդ չէին ըլլար . ելք այն անասունները կը
 հնազանդին Տէրովը հրամանին , արդեօք մենք որ
 չտի ևս առաւել պիտի հնազանդինք . քանի որ խելք
 միտք , լեզու , խօսիլ , կարգալ , գրել ունինք , աւաղ
 որ անասուններէն ալ վատթար ենք որ չենք զգար
 մեր Տէրովը հնազանդ ըլլալու պարտքերնիս .
 Մարդ երբոր կագարեալ կըլլայ , նախ և առաջ
 պէտք է խորհի և հասկնայ թէ Աստուած մարդս ին
 չո՞ւ համար ստեղծեց , վասն զի աշխարհիս մէջ ա
 սանց պէտքի բան մը չըկայ , ամեն բան պէտք ունի .
 երբ հասկնայ թէ սատանաները հրեշտակ էին ու ա
 նոնք վար թափեց և մարդիկ ստեղծեց որ անոնց տե
 ղը լեցընէ , ասոր համար կրնայ հասկընալ թէ մար

դոց և սատանային մէջ որչափ հակառակութիւն կայ. քանի որ սատանան աղէկ գիտէ որ իրեն առջի փառքը և պսակը մարդոց պիտի տայ, ասոր համար կատաղած դազանի պէս նախանձութեամբ կաշխատի որ մարդիկ զուրկ մնան այն փառքէն և դժոխք երթան. այն նախանձութիւնն էր որ մեր նախահայրն Ադամ խաբեց և դրախտէն հանեց, նորէն այն նախանձութիւնն էր որ կայէնին սիրտը մտաւ իր անմեղ եղբայրը մեռցնել տուաւ և անոնց պէս շատերը նախանձութեամբ Աստուծմէ հեռացուց, և մինչև այսօր ու մինչև աշխարհիս վերջը կաշխատի հեռացնելու այս կերպով: Դատաւորին կրնէ, որ կողմէն որ քանի մը ոսկի տուին՝ այն կողմը ըրէ իրաւունքը, վասն զի ամեն ատեն այս պաշտօնին մէջ չես գտնուիր, քսակը լեցնել նայէ որ վերջը հանգիստ ապրիս. առուտուր ընողներուն ալ կրնէ, ծանր առ և թեթեւ տուր որ օգուտ ընես, հիմա աշխարհ անանկ է, եթէ ճշմարտութեամբ վարուիս՝ աղքատ պիտի ըլլաս. ծառաներուն և աղքատներուն ալ կրնէ թէ հարուստները որ այնչափ հարստացան՝ սուտ զուրցելով, գիմացիներ խաբելով և զողնալով այն պաշտօնին հասան որ երջանիկ կապրին, եթէ դու ալ ընես հարուստ կըլլաս, աղքատի ալ կը նայիս, եկեղեցիի ալ կը նայիս, ան ատեն անուն ալ կը վաստկիս. հարուստներուն ալ կրնէ թէ ինչո՞ւ աղքատի կը նայիս, միթէ հեռու կաշխատին, դուն գիշեր ցորեկ հոգիդ կը հանես միթէ անո՞նց համար է, ծառաներուդ ալ

Չատիկ կը նայիս, Ծնունդ կը նայիս, լաթ կը շինես, ի՞նչ վրադ պէտք է, չէ՞ որ ամսական կուտաս. եթէ ատանկ ձեռքդ բաց ըլլաս՝ դու ալ կաղքատանաս, ծերութեանդ ատենը ի՞նչ պիտի ընես, մէկուն լաթ մի շինէր, մէկային ամսականը պակաս տուր կամ ելած օրը պատճառ մը գտիր 30 կամ 100 դահեկան պակաս տուր որ ասանկով աւելցունես և ծերութեանդ ատենը հանգիստ ըլլաս, և շատերուն ալ կրնէ թէ, հազիր կեր խմէ ամեն կերպ ուրախութիւնը ըրէ, աս աշխարհս ինչո՞ւ համար եկար և ըն:

Վերջապէս վարդապետին կերպ մը, քահանային ուրիշ կերպ, ծերերուն տեսակ մը, երիտասարդներուն ուրիշ տեսակ մեղք գործել տալու կաշխատի ամեն ատեն: Ասով ալ սիրտը չը հանդարտիր և կսկսի հասարակութեան մէջ որով ցանկելով ամեն կերպ գէշութիւն, խարդախութիւն, կռիւ, մարդիկ մէկզմէկ մեռցունել, կողոպտել և շատ ու շատ չարութիւններ կը ծագեցնէ մարդոց մէջ. չըլլայ թէ սատանան ասանկ բան մը չընէր ու ես ալ գրած ըլլամ. փորձերը ծառայ մը աղայի մը քով 10—20 տարի աշխատի և շատ մեծ պաշտօնի տէր ըլլայ և նոր եկող ծառայ մը այն պաշտօնը ձեռքէն առնէ, արդեօք այն առջի ծառան որչափ պիտի նախանձի անոր վրայ թէ այն պաշտօնը իմն էր այն առաւ. կսկսի երեսանց աղէկ վարուիլ և գաղտնի դարան լարել որ աղային աչքէն հանելէն զինի փոսին մէջը ձգէ որ աղատելիք չունենայ: Ուրեմն սատանան որ հրեղէն էր և շատ

դոց և սատանային մէջ որչափ հակառակութիւն կայ-
 քանի որ սատանան աղէկ զիտէ որ իրեն առջի փառ-
 քը և պսակը մարդոց պիտի տայ, ասոր համար կատ-
 ղած գաղանի պէս նախանձութեամբ կաշխատի որ
 մարդիկ զուրկ մնան այն փառքէն և դժոխք երթան-
 այն նախանձութիւնն էր որ մեր նախահայրն Ադամ
 խաբեց և դրախտէն հանեց, նորէն այն նախանձու-
 թիւնն էր որ Կայէնին սիրտը մտաւ իր անմեղ եղ-
 բայրը մեռցնել տուաւ և անոնց պէս շատերը նա-
 խանձութեամբ Աստուծմէ հեռացուց, և մինչև այ-
 սօր ու մինչև աշխարհիս վերջը կաշխատի հեռացնե-
 լու այս կերպով: Դատարարին կրսէ, որ կողմէն որ
 քանի մը ոսկի տուին՝ այն կողմը ըրէ իրաւունքը:
 վասն զի ամեն ատեն այս պաշտօնին մէջ չես
 գտնուիր, քսակը լեցնել նայէ որ վերջը հանգիստ
 ապրիս. առուտուր ընողներուն ալ կրսէ, ծանր առ-
 և թեթեւ տուր որ օգուտ ընես, հիմա աշխարհ ա-
 նանկ է, եթէ ճշմարտութեամբ վարուիս՝ աղքատ
 պիտի ըլլաս. ծառաներուն և աղքատներուն ալ կրսէ թէ
 հարուստները որ այնչափ հարստացան՝ սուտ զուրցե-
 լով, զիմացինը խաբելով և զողնալով այն պաշտօնին
 հասան որ երջանիկ կապրին, եթէ դու ալ ընես հա-
 ըուստ կըլլաս, աղքատի ալ կը նայիս, եկեղեցիի ալ
 կը նայիս, ան ատեն անուն ալ կը վաստկիս. հա-
 ըուստներուն ալ կրսէ թէ ինչո՞ւ աղքատի կը նայիս,
 միթէ հեռու կաշխատին, դուն գիշեր ցօրեկ հողիդ
 կը հանես միթէ անո՞նց համար է, ծառաներուդ ալ

Ջատիկ կը նայիս, Ծնունդ կը նայիս, լաթ կը շինես,
 ի՞նչ վրադ պէտք է, չէ՞ որ ամսական կուտաս. եթէ
 ատանկ ձեռքդ բաց ըլլաս՝ դու ալ կաղքատանաս,
 ծերութեանդ ատենը ի՞նչ պիտի ընես, մէկուն լաթ
 մի շինէր, մէկալին ամսականը պակաս տուր կամ ե-
 լած օրը պատճառ մը գտիր 50 կամ 100 դահեկան
 պակաս տուր որ ասանկով աւելցունես և ծերու-
 թեանդ ատենը հանգիստ ըլլաս, և շատերուն ալ
 կրսէ թէ, հողիդ կեր խմէ ամեն կերպ ուրախու-
 թիւնը ըրէ, աս աշխարհս ինչո՞ւ համար եկար և ըն:

Վերջապէս վարդապետին կերպ մը, քահանային
 ուրիշ կերպ, ծերերուն տեսակ մը, երիտասարդնե-
 ըուն ուրիշ տեսակ մեղք գործել տալու կաշխատի ա-
 մեն ատեն: Ասով ալ սիրտը չը հանդարտիր և կսկսի
 հասարակութեան մէջ որոմ ցանելով ամեն կերպ գէ-
 շութիւն, խարդախութիւն, կռիւ, մարդիկ մեկըմէկ
 մեռցունել, կողոպտել և շատ ու շատ չարութիւններ
 կը ծագեցնէ մարդոց մէջ. չըլլայ թէ սատանան ա-
 սանկ բան մը չընէր ու ես ալ գրած ըլլամ. փորձ
 երբ ծառայ մը աղայի մը քով 10—20 տարի աշխա-
 տի և շատ մեծ պաշտօնի տէր ըլլայ և նոր եկող ծա-
 ռայ մը այն պաշտօնը ձեռքէն առնէ, արդեօք այն
 առջի ծառան որչափ պիտի նախանձի անոր վրայ թէ
 այն պաշտօնը իմս էր այն առաւ. կսկսի երեսանց ա-
 ղէկ վարուիլ և գաղտնի դարան լարել որ աղային աչ-
 քէն հանելէն զինի փոսին մէջը ձգէ որ աղատելիք
 չունենայ: Ուրեմն սատանան որ հրեղէն էր և շատ

փառքերու տէր ու զրկուեցաւ, որչափ ևս առաւել ջանք կրնէ որ մարդիկ իրեն փառքին չը հասնին և տարտարոսը իյնան որ ասանկով իր վրէժը առնէ. իրաւ իրաւ երբոր Աստուած իր սիրելի հրեշտակներուն չը խնայեց վար թափեց հնազանդութիւն չընել նուն համար, երբոր մենք ալ հնազանդութիւն չընենք Աստուծոյ որչափ ևս առաւել պիտի հեռանանք Աստուծոյ երեսէն ու թշուառ պիտի ըլլանք: Այլսարհիս մէջ որչափ մարդ կայ այնչափ բնութիւն կայ, այնչափ ալ փառք կայ. մէկը տունը աղէկ զարդարելու փառքն ունի, միւսը պարտիզի, միւսը ցորենի կամ արտի, միւսը ձիւ կամ կառքի, միւս մըն ալ հանգերձի և ուրիշ մըն ալ գէնքի և այլն. ասանկ ալ մէկը պառնկութեան ետեւ է, միւսը գողութեան, միւսը ագահութեան, ուրիշը գինովութեան և այլն. գանք Աստուծոյ տուած պարգեւներուն վրայօք. մէկին հարստութիւն տուեր է, միւսին գողելի արհեստ միւսին իմաստութիւն, և միւսին մարգարէութիւն և այլն:

Բայց ամեն մարդ թող աղէկ գիտնան որ այս աչխարհիս բոլոր ցանկութիւնները սատանայինն են (չէ թէ Աստուծոյ) ամենն ալ պիտի կորսնցնէ. տէրն մեր Յիսուս կրսէ թէ երբոր մարդ մը աշխարհ վասարկի և իր անձը կորսնցնէ ինչ օգուտ կըլլայ իրեն. սիրելիք այս խօսքը խիստ խօսք մըն է և անոր վրայ մտածելու ենք և գիտնալու ենք թէ իրաւ Պօլոսոյ կէսը կամ ամենը մերինը ըլլայ և մեր հողին կորսնցու-

նենք նէ ինչ օգուտ կըլլայ մեզի, քանի որ հողիս առաւել է քան զմարմին, և հողին յաւիտեանս յաւիտենից է վերջ չունի, և մարմնոյն օրերը Գաւիթ մարգարէն պահ մը գիշերոյ նմանցուցեր է որ քիչ բան մը կցուցնէ:

Ուրեմն հիմայ հարցունեմ ձեզի ո՞վ պիտի երթայ այն հրեշտակներուն տեղը և անոնց լուսեղէն հանգերձը որու պահուած է ո՞վ պիտի հագնի և անոնց մատանիները ո՞վ պիտի դնէ և անոնց աթոռները ո՞վ պիտի նստի. սատանային հնազանդութիւն ընողները չենէ Աստուծոյ. սատանային կամքը կատարողները չենէ Աստուծոյ, սատանային ծառայ եղողները չենէ Քրիստոսի. Քրիստոս ըսաւ թէ ո՞վ որ իմ երկնաւոր հօրս կամքը կը կատարէ. կը վախնամ և չեմ համար ձակիր ըսելու թէ իրեն հօրը կամքը ոչ կը վնասուենք և ոչ ալ գիտենք ինտո՞ր պիտի կատարենք. մինակ տէր տէր ըսելով, նորէն Յիսուս ըսաւ թէ մինակ տէր ըսողները չեն կրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնալ. վասն զի այն օրը պիտի ըսեմ թէ չեմ հանչնար ձեզ: Ասոր համար ամէն ազգ, և ամէն քրիստոնեայ, հարուստ, աղքատ, ծառայ, ազատ, իրենց պարտքն է որ իրենց հողին և Աստուծոյ արւած պարգեւներուն վրայ մըտած են, քանի որ խելք միտք բանականութիւն և զգացում ունին:

Գաւիթ մարգարէն ըսաւ թէ ինչ տամ իմ տիրոջըս փոխարէն. քանի որ ինք ինձի ամեն բան տուեր է, ուրիշ բան մը չը գտնալով աղօթքս կուտամ ըսաւ

տէրոջը. ըսել է որ Աստուած աղօթքի կապանէ միայն. բայց որուն աղօթքին. գողերուն, պռունիկներուն, գինովներուն, անառակներուն, հայհոյութիւն ընողներուն, և կերպ կերպ չարութիւն ընողներուն. ոչ, ոչ. անոնք ալ Աստուծոյ թագաւորութիւնը չպիտի տեսնեն և Աստուած անոնց ձայնը չպիտի լսէ, ինչու որ Յակոբոս կրսէ Գլ. Գ. Հմբ. 3. Չարաչար կիսնդրեն. Եսայի Գլ ԾԹ. Հմբ. 2. քանի որ մեղքի մէջ կապրին. Առակ. Գլ ԻԲ. Հմբ. 9. Աստուծոյ օրէնքը կը մերժեն ու մտիկ չեն ընէր. Առակ. ԻԱ. Հմբ. 13. Աղքատներուն ձայնին դէմ ականջնին կը գոցեն. Եսայի Գլ Ա. Հմբ. 15. ԾԹ. Հմբ. 3. Անանկները արիւնահեղ են. Երեմիա Գլ ԺԱ. 11—14. Կռապաշտ են կրսէ. Յոբ Գլ ԻԷ. 8—9. Կեղծաւոր են, հպարտ են, կրսէ. Ղուկ. Գլ ԺԳ. Հմբ. 11. Ինքզինքնին արդարացնող են. Սաղ. ԺԲ. 40. Սուրբերուն թշնամի են. Միքիա Գլ Գ. 2—4. Անգթութեամբ սուրբերը կը շարժարեն և չն. Հռովմ. Գլ Ա. Բոլոր դժուար կարդացէք որ կրսէ. որոնք որ Աստուծոյ ճշմարտութիւնը սուտի հետ փոխեցին, Աստուծոյ ճշմարտութիւնը ծածկեցին և իրենց սուտը հաստատեցին. անոր համար կրսէ. Աստուած ալ անարդ խորհուրդներու մատնեց անվայել բաներ ընելու. և ըրին ալ. անիրաւութիւն, պռնկութիւն, անզգամութիւն, ազահութիւն, չարութիւն, նախանձութիւն, մարդասպանութիւն, հակառակութիւն, նենգութիւն, չարասրտութիւն. և էին քառանք, չարախօսներ, աստուածատողներ, նախատող

ներ, հպարտներ, ամբարտաւաններ, չար բաներ հընարողներ, ծնողաց անհնազանդներ, անմիաներ, ուխտ չպահողներ, անգութներ, անհաշտներ, անզորմներ. անոնք որ ասանկ բաներ կընեն, մահուան արժանի են կրսէ Պօղոս առաքեալ. չէթէ մինակ ընողները՝ այլ ընողներուն հաւանութիւն տուողներն ալ. ըսել է որ հաւանութիւն տալը աւելի ծանր է և Աստուծոյ դէմ. Սիրելիք քանի որ գլուխնիս Աւետարանին կապուած է և վկայութիւն ալ դրի եթէ կարդաք կրնաք հասկնալ թէ Աստուած ասանկներուն աղօթքը չի լսէր և բռնած ծովերնին չընդունիր կրսէ Ս. Գիւրբը. հապա որո՞ւ աղօթքը կը լսէ. իրմէ վախցողներուն, մաքուր սիրտ ունեցողներուն և իրենց պարտքը ճանչցողներուն աղօթքին կը լսեմ կրսէ Տէրը. նայինք թէ Աստուած մեզի ի՞նչ տուեր է որ մենք ալ իրեն աղօթք ընենք և մեր պարտքը ճանչնանք, տուէր մեզի խելք, միտք, աչք, բերան, հոգի, կեանք, և աշխարհի մէջ շատ ու շատ բարիքներ որ ուրախութեամբ կը վայելենք, նայինք թէ այս բաները Աստուած տուեր է մեզի. հոս տեղ քիչ մը մտածեմ փորձը գանամ, գտայ փորձը, երբոր Աստուած ուզէ մեր հարստութիւնն ալ մեր հոգին ալ և ամէն ինչ քերնիս կրնայ առնել. այս կրնայ առնել, երբոր ինքն է տուեր ըսել է որ մեր ամէն բանը անոր նէ մերը չէ, երբոր անոր նէ ըսել է որ շատ ու շատ պարտք ունիմք եզեր վճարելու. Մէկզմէկ սիրել պարտքերնիս է, ինչպէս որ ինք մեզ սիրէր է աղքատին նայլ

և օգնութիւն ընել պարտքերնիս է . ինչպէս որ ինքն
 ալ ամեն բարիք տուեր է մեզի , երբ կոյր մը տես-
 նանք կամ անդամաղոյծ մը կամ համր՝ կամ խուչ
 կամ հիւանդ . և կամ թշուառ հիւանդ մը , այն ա-
 տեն պարտքերնիս է որ ասոնց վրայ նայելով փառք
 տանք Աստուծոյ և իրմէն չնորհակալ ըլլանք որ մեզ
 ասանկ չէ ըրեր . սիրելիք ինչպէս որ այս աշխարհիս
 մէջ մարմնաւոր պարտքը չվճարողը պատիւ չունե-
 նար իր բարեկամներուն քով , անանկ ալ հոգեւոր
 պարտքը չվճարողը պատիւ չունենար Բրիտոսոսի քով :
 Անանկ է նէ ով հաւատացեալ եղբարք արթննանք
 մեր պարտքերը ճանչնալու և ջանք ընենք կատարե-
 լու , ի՞նչով հաւատքով յուսով և սիրով վասն զի
 ինչպէս որ ջանքը և բաղքը մէկզմէկու հետ կապուած
 պէտք է , անանկ ալ հաւատքը յոյսը և սէրը մէկզմէ-
 կու հետ կապուած պէտք է ըլլալ : Բայց աւանդ որ
 միայն անունները լսած ենք և չենք կատարեր . ին-
 չու որ Աբրահամին պէս կատարեալ և հաստատ
 հաւատքը կը օտրվեցնէ մարդուն թէ ինչ որ ունի տէ-
 րոջն է և իրեն բան մալ չիկայ (բանի որ մեռած օրը
 բան մը չտանիր) ասոր համար իրեն ունեցածը և ինք-
 զինքը տէրօջը կը յանձնէ և անոր կամքին հետ կը
 քալէ , ու իրեն բարի պատուղները կը տեսնուի , սա-
 կայն կատարեալ յոյսը կը ցուցնէ թէ երկինքը իրեն
 համար պատրաստ լուսեղէն պալատ մը կայ ամեն
 կերպով զարդարուած անոր համար հոս տեղի բոլոր
 ունեցածները աչքին բան մը չերեւար , կակի

զիշեր ցորեկ փափաքել որ օր մը առաջ երթայ
 նոյն պալատը հանգստանայ . չէ՞ք գիտէր որ մէկ
 մարդու մը առուտուրը ուր տեղ կամ որ քաղաք որ
 գիւղ ըլլայ նէ մարդուն խելքը միտքը հոն կըլլայ , և
 գիշեր ցորեկ կը փափաքի թէ երբ ձիւնը պիտի հա-
 յի և ճամբաները պիտի բացուի որ երթամ իմ առ-
 նելիքներս ժողովեմ ու փափաքիս հասնիմ . ասոր հա-
 մար իր ձեռքէն եկածին շափ ազքատի օտարի և ա-
 մէն կարօտներուն բարիք ընելէն չդադարիր , սէրը
 արդէն չարիք ընել չուզեր ուրիշին . ով իրեն զա-
 ւակին կամ սիրելի եղբորը չարիք կընէ և ըն :
 Արեւմտ ամեն քրիստոնեայ եղբայր Բրիտոսոսով
 ասանկ հաստատուն հաւատք յոյս , սէր ունեցողնե-
 րը Բրիտոսոսի ծառայ են չէ թէ ստանայի և Բրիտ-
 տոսի նշանները ունին իրենց վրայ և այն նշաններով
 համարձակ պիտի երթան նոյն պալատը և պիտի վա-
 յելին հրեշտակներուն փառքը . Յիսուս ըսաւ թէ
 “ ով որ իմ երկնաւոր հօրս կամքը կատարէ , այն է
 իմ եղբայրս , ըսյրս ու մայրս ” եթէ Յիսուս այս խօս-
 քը չըսէր նէ կարելի է քիչ մը յուսահատ պիտի մնա-
 յինք , ինչու որ անգին ծառայ ըստու , վասն զի ծա-
 ռան իրեն տէրօջը քով չկրնար նստիլ և տէրօջը ու-
 նեցածին բաժանորդ չկրնար ըլլալ . Բայց օրհնեալ է
 Աստուած որ հիմա եղբայր ու ըսյր ըստ որ անչուշտ
 եղբայր եղբոր քով կրնայ նստիլ և անոր ունեցածին
 կրնայ բաժանորդ ըլլալ , ասանկ յոյս չունեցողներուն
 խելքը միտքը այս աշխարհիս ցանկութեան ետեւէ

են, մեռնելէ ալ կը վախնան վասն զի հոգին կը վկայէ թէ ինչ որ ունի հոս է, անդին բան մը չունի։ Միրելիք, Աստուծոյ մեր վրայ ունեցած սիրոյ վրայ շատ կը մտածեմ բանի մը չեմ կրնար յարմարցնել, վասն զի խելքէս ու միտքէս վեր է. արդէն իմ տգէտ և տկար ըլլալս յառաջաբանին մէջ խոստովաներ եմ, միայն այսչափ կը գրեմ որ Աստուած աշխարհիս մէջ շատ և շատ բարիք տուեր է մարդուս վայելու թեանը համար. Բրիստոս աշխարհ չեկած Աստուած նայեցաւ որ Հայր Աբրահամ, Իսահակ, Յակոբ և ասոնցպէս սուրբերը որ Աստուծոյ խօսքերուն և օրէնքներուն համեմատ քալեր էին դժոխք կերթային ու սատանային իշխանութեան տակն են, ցաւեցաւ անոնց վրայ, խղճաց, գթաց և ուղեց ազատել, եթէ կամէր ուրիշ կերպով կարող էր ազատելու, բայց ուղեց որ մեր վրայ ունեցած սէրը մեզի ցուցունէ, սորվեցունէ և դաս տայ։ Ով սիրելի եղբայրներ, հոս սարսափելի և խորունկ տեսարան մը կը տեսնեմ որ սիրտըս կը սարսափի և գրիչս կը դողայ, չեմ կրնար համարձակ գրել որ իսկ և իսկ Աստուած ինչեր վրան քող մը առնելով և իր աստուածութիւնը ծածկելով աշխարհ եկաւ պտղտեցաւ և մեզի հետ բարեկամութիւն ըրաւ կամ նշանառք ըրաւ, մէկուն փեսայ եղաւ մէկային եղբայր և ըն. վերջապէս ամէն մէկուն հետ մէկ մէկ տեսակ բարեկամութիւն ընելէն վերջը իրեն միտքը և օրէնքը իր բարեկամներուն սորվեցուց ամեն կերպով դաս տուաւ. սարսափելի սէրը

հոս է որ մեզի համար մատնուեցաւ, չարչարուեցաւ, խաչուեցաւ, տրուե թափեց, մեռաւ և թաղուեցաւ եղբայրներ. այս սէրը ինչի՞ նմանցունեմ որ եղբայր եղբոր համար չմեռնիր և զաւակ մը ծնողաց և ծընողքն ալ զաւակին. ո՞հ այս ի՞նչ անըննելի բան է որ թագաւոր մը՝ չէ թէ թագաւոր մը հապա թագաւորաց թագաւորը տէրը ու Աստուածը դայ ժողովրդեան համար մեռնի. ինչպէս որ կայիափայ մարգարէացաւ թէ՛ լաւ է մէկ մարդ մը մեռանի ժողովրդեան համար և բոլոր ժողովուրդը ազատի. ով քրքրիստոնեայ եղբայրներ, հիմայ մենք որչափ պիտի վախնանք անկէ որ մեզի համար մեռաւ, կամ որչափ զգուշութեամբ պիտի պահենք պատուէրները որ մեզի սկզբնական մեղքէն ազատեց. մեզի համար մեռաւ ըսինք, բայց օրհնեալ է Աստուած որ երեք օրէն յարութիւն առաւ և իրեն բարեկամներուն հետ տեսնուեցաւ ու պատուիրեց անոնց թէ՛ ինչպէս որ ես մեռայ և կենդանացայ, դուք ալ պիտի մեռնիք և կենդանանաք. բայց հիմա որչափ որ ուրախ էք իմ կենդանութեանս վրայ, ես պիտի երթամ աւելի մխիթարիչ մը պիտի խրկեմ որ ձեզ մխիթարէ. և ձեզի համար ալ տեղ պիտի պատարաստեմ, ինչու որ ես ուր որ ըլլամ, իմ սիրելիներս և իմ պատուէրներս պահողները հոն պիտի ըլլան։

Ուրեմն սիրելիներս այս ձայնը ձեր ախանջին ալ կուգայ արդեօք այս ի՞նչ ամենասիրելի բարեկամի մը մխիթարիչ խօսքեր է որ ախանջիս կուգայ, իրաւ

իրաւ զարմանալի բան է որ թագաւոր մը աղքատ
ներու ձկնորսներու հետ ասանկ սիրալիւ խօսքեր ընէ
կամ թագաւոր մը հասարակութեան ազատութեանը
համար ինքը յանձնառու ըլլայ մեռներու և մեռնի
հապա մենք ինչպէս չմտածենք թէ այս բարեկամը
մեզ մեռներէն ազատեց . կամ չափէն աւելի պարտք
ունէինք որ այն պարտքը կարող չէինք վճարելու այն
բարեկամը եկաւ վճարեց և մեզ ազատեց , արդեօք
մենք ի՞նչ ընենք անոր փոխարէն որ մեզի ըրաւ , ի՞նչ
ընեն կամքը կատարենք բայց ինչ է իւր . կամքը եթէ
Սուրբ գիրք կարդաք ան կը սորվեցնէ ձեզի չէ թէ
ուրիշ պատմութեան պէս կարդաք հապայ ձեզ ազա-
տող բարեկամը երբ նամակ մը խրկէ ձեզի որչափ ու-
րախութեամբ պիտի ընդունիք և օրը կամ շաբաթը
քանի՞ քանի անգամ պիտի կարդաք եթէ խօսքմըն ալ
չհասկընաք միթէ պարտքերնիդ չէ՞ որ ասնիք գիտ-
նականի մը քով և ըսէք թէ ամենասիրելի բարեկա-
մէս նամակ առած եմ բայց սա քանի խօսքերը չկրցի
հասկընալ կաղաչեմ որ հասկցնես ինձի . սիրելիք այն
բարեկամը որ մեզ մեռներէ՛ և գժոխք երթալէ ազատեց
և բոլոր պարտքերնիս ալ առաւ սիրեց մեզ չափէն ա-
ւելի և հիմայ որ նամակ խրկեք է մեզի հարկաւ նո-
րէն մեր օգտին համար է ինչպէն չկարդանք և մեր
օգուտը կամ վնասը չհասկընանք . եթէ ասանկ բարե-
կամի մը նամակը գոնէ կիրակի օրերը չկարդանք ի՞նչ
ապերախտ և քարէ սիրտ մարդ եղած կրլլանք քա-
նի որ խեղք միտք և զգալ ունիմք մեր պարտքն է որ

կարդանք եթէ չկարդանք անբան անասուններէն ալ
ցած կրլլանք , վասն զի անբան անասունները զիրենք
կերակրող տէրերնին կը ճանչնան և շատ անգամ ալ
կը լրցեն բոլորաիքը իբր թէ իրենց շնորհակալու-
թիւնը կը յայտնեն : Ո՞րչափ եւս առաւել վարդա-
պետներուն և քահանաներուն պարտքն է որ իրենց
հոգեւոր պաշտօնը արդարութեամբ վարեն ինչպէս
որ Սուրբ առաքեալները վարեցին , չէ՞ որ իրենք ալ
Քրիստոսի փոխանորդ են և ժողովրդեան հայելին ,
ժերերուն ալ պարտքն է որ հայրական գլխութեամբ
երիտասարդները խրատեն կառավարեն , Աստու-
ծոյ խօսքին և պատուէրին մէջ կը թեն և անոնք
օրհնեն , և անոնց համար աղօթեն , ու հոգ տա-
նին Աստուծոյ շնորհաց և օրհնութեան մէջ
կեանք անցունեն ինչպէս որ Աբրահամ Յակոբ ը-
րին , երիտասարդներուն ալ պարտքն է որ ձերերը
պատուեն մեծարանօք և անոնց հնազանդին և բար-
կութեամբ պատասխան չիտան , Աստուծոյ վախովը
խղճմտանք ունենան անոնց վրայ ինչպէս որ ունեցաւ
Սահակ իր հօրը վրայ : Հարուստներուն պարտքն է որ
իրենց ծառաներուն իրաւունք ընեն . և Աստուծոյ
վախովը ասոնց հետ վարուին , հիւանդութեան ատենը
խնամեն , չափաւորութեամբ յանդիմանեն , վարձքեր-
նին չկտրեն և այլն ինչպէս որ Աբրահամ կուռնէյիոս
և հարիւրապետը ըրին իրենց ծառաներուն , եւ ծա-
ռաներուն պարտքն է որ նախ գիտնան թէ իրենք
իրենց մարմնաւոր տէրերէն պղտիկ են . և հնազանդ

ըլլան անոնց , և անոնց հրամանին սպասեն , ու հաւատարիմ ըլլան . անոնց գործը՝ ըրած առեւնին սրտի մասը և խոհեմութեամբ ընեն . (չէ թէ մինակ աչքի առջեւ) խղճմտանքով սէր ունենան անոնց վրայ . բարկութեամբ պատասխան չիտան . խարդախութիւն չընեն . և իրենց վիճակէն դուրս ըլլան . թէ և աշխարհիս մէջ ծառայ են բայց ֆրիստոսի ազատ են . ասանկ ալ ամէն մարդ և ամէն քրիստոնեայ պարտաւոր է ձեռքէն եկած բարիքը ընել մէկզմէկու , ֆրիստոս ըսաւ թէ բարի արարէք ատելեաց ձերոց , և ձեր թշնամիները սիրեցէք . եղբայր ասիկայ հնարաւոր բան չէ թշնամին սիրենք բայց սիրելու ատենը կայ . երբ ճամբայ մը երթանք նայինք տեսնանք որ ձորի մը մէջ մեր թշնամին ինկած . կամ առաջակինը կողոպտելով կապեր ձգեր են . կամ փորձանքով մը ոտքը կտարեր ինկեր է . կամ ուրիշ պատճառով մը ինկեր մնացեր և օգնութիւն մը կը վնասէ . ան ատեն մեր պարտքը չէ որ ձեռքերնուս եկած օգնութիւնը ընենք ան մարդուն , ահա ֆրիստոս ասանկ ատենի մը համար ըսաւ բարիք ըրէք ձեր ատելեաց և թշնամեաց : Սիրելիք Սաղօմոն կրսէ թէ դուն չես գիտեր թէ վաղը քեզի ի՞նչ պիտի ըլլայ , կարելի է որ մին ալ քեզի փորձանք մը կուգայ ան ատեն . քու թշնամիդ քեզի բարիք կրնէ : վասն զի Տէրն մեր ըսաւ թէ ինչ չափով որ չափես նոյն չափովք պիտի չափուիս . ըսել է որ մենք ինչ որ ընենք ուրիշին (թէ չար եթէ բարի) ուրիշն ալ պիտի ընէ

մեզի անտարակոյս . անանկ է նէ արթուն կենանք սրտերնիս մաքրենք աղօթք ընենք առ Ստաուած որ ինքը կարողութիւն տայ մեզի պարտքերնիս ճանչնալու և վճարելու և իր խոստացած փառաց պատկին հասնելու , ուրեմն չմոռնանք ըսելու թէ երբ այս պարտքերնիս վճարենք , չըլլայ թէ մեծամտինք կամ ըրած բարիքներնուս կոթընինք , ըսելով թէ՛ ատանկ և անանկ ազէկութիւններ ըրի , հարկաւ արքայութիւն պիտի երթամ . չէ սիրելիք չէ , քանի որ մեր պարտքն է ըրինք և ճանչցանք ի՞նչ իրաւունք ունինք կոթընելու . զոր օրինակ թէ որ հարուստին մէկը ժամանակով մեզի ստակ տայ և ուրիշ ապրանքներն ալ տայ (բայց եթէ ամենը մանրամասն հաշիւ ընէ կարողութիւննիս չի տանի վճարելու) երբ ատենը լրանայ և տանինք նոյն հարուստին ստակը վճարենք ի՞նչ իրաւունք ունինք նոյն հարուստէն սպասենք թէ ստակ տուինք . արդեօք ինքը տուն մը կամ պարտէզ մը մեզի չի բաշխէր , սիրելիք այն հարուստը երբ մեր միտքը հասկնայ պիտի չըսէ թէ ցնորած մարդ դուն քու պարտքիդ կէտը կամ քառորդը բերիք տուիր նորէն ես դուս եղայ . հիմա ի՞նչ իրաւունք ունիս ըսելու թէ ես ստակ տուի քուն մը կամ պարտէզ մը չի բաշխէր ինծի և ինչ իրաւ ես պարտէզներ և տուներ խիտո շատ ունիմ , բայց ատանկ միտք ունեցողներուն չեմ բաշխէր . դուն պարտքիդ կէտը բերիր տուիր և ես ալ դուս եղայ . ի՞նչ իրաւունք ունիս մեծ բեռ մը բեռնաս վրաս (միմեթ մը բեռնաս) թէ ստակ տուի ինծի

մեծ բան մը չի բաշխէր ահա ասանկ միտք մը ունե-
 նալուդ համար քեզ կը բանտարկեմ մինչև որ մնա-
 ցածն այ վճարես . եղբայրներ ինչ բարիք որ ընենք
 աշխարհիս մէջ մէկզմէկու մեր պարտքն է որ անշուշտ
 պիտի ընենք . թէ վանքի թէ եկեղեցիի թէ աղքատի
 թէ օտարի թէ հիւանդի թէ բանտարկեալի թէ ճամ-
 բորդի թէ ազգի թէ քահանայի թէ վարդապետի
 և ինչ ամէն մէկուն իրեն համեմատ բարիքը ձեռքեր-
 նուս եկածին չափ պարտքերնիս է պիտի ընենք .
 բայց արքայութիւնը Աստուծոյ ձրի շնորհքն է որին
 որ ուղէ անոր կուտայ . եթէ վանք շինողը կամ ժամ
 շինողը կամ աղքատ նայողը և ինչ ասոնք որ արքայու-
 թիւն երթան և միւսները շերթան ըսել է որ արքա-
 յութիւնը ստակով ծախու կառնեն , ձրի եղած չը-
 լար հապա ստակով :

Արթնանք սիրելիներս արթնանք , վասն զի ար-
 թնալու ժամանակ է . տիրոջը աղօթք ընելու և ա-
 նոր ասպաւինելու ժամանակ է անոր օրէնքը և պատ-
 ուիրանքը սորվելու և պահելու ժամանակ է մեր
 պարտքերը ճանչնալու և վճարելու ժամանակ է տե-
 ղոջը ահեղ դատաստանին վրայ մտածելու ժամանակ
 է մեր մեռնելը և Գաբրիէլեան փողին հնչումը միտք
 բերելու ժամանակ է . այն սարսափելի օրը շատ հո-
 դիներ ուրախութիւն կը հագնին և շատ հոգիներ
 արտմութիւն , որ ամեն հաւատացեալներու յայտնի
 է երբ Գաբրիէլ փողը հնչեցուցանէ արդարոց հոգի-
 ները ձեռքերնին ծաղիկ առնելով ուրախութեամբ

կերթան իրենց մարմիններուն աւետիս կուտան ելէք
 կրսեն ինչու պառկեր էք մեր սիրելիներ ելէք տեսէք
 մեր ուրախութիւնը որ մինչև հիմա ի՞նչ փառքերու
 և զարդարանքներու մէջ զուարճացանք . ահա հիմա
 տէրը մեզ դատաստանի կը կանչէ որ ասկէ վերջը
 միատեղ պիտի զուարճանանք քանի որ աշխարհիս մէջ
 դուն քու մարմինիդ գործքերը չըրիր հապա հոգե-
 ւոր գործքեր ըրիր որ այսօր հանգիստ ըլլանք յա-
 ւիտենական կենաց մէջ : Ասանկ ուրախալից խօսքերով
 Աստուած օրհնելով և Աստուծոյ շնորհակալութիւն
 մատուցանելով կերթան տէրոջը դատաստանը . և
 տէրն ալ պիտի ըսէ անոնց բարի եկաք հօրս օրհնած
 ները և իմ սիրելի ծառաներս . վասն զի անօթի էի
 կերցուցիք , մերկ էի հագցուցիք և ինչ . ահա հիմա ձե-
 զի համար տեղ պատրաստեր եմ գացէք ուրախու-
 թեամբ յաւիտեանս յաւիտենից հանգստացէք և ինչ :

Գանք մեղաւոր հոգիները լացով արցունք թա-
 փելով և արտմութեամբ կ'երթան իրենց մարմիննե-
 թուն կը կանչեն թշուառ մարմին . գարշելի մարմին
 ապերախտ մարմին ել ել ի՞նչ ես պառկեր մինչեւ
 այսօր ես կրակներու մէջ կերիմ կը չարչարուիմ վասն
 զի դուն աշխարհի մէջ մարմինիդ կամբը կատարե-
 ցիր և սատանային հնազանդեցար հոգեւոր բարիք
 մը չըրիր ասոր համար ել որ ասկէ վերջը մէկ տեղ
 պիտի չարչարուինք ինչու որ Տէրը դատաստանի կը
 կանչէ հիմա ի՞նչ երեսով երթանք Տէրոջը դէմ կայ-
 նինք և ի՞նչ պատասխան պիտի տանք անոր . ասանկ

սարսափելով և դողալով կերթան ատեանը որ ֆրիստոս և առաքեալները նստած սիրելիք այս անաչառ և անողորմ դատաստանէն ո՛վ չի վախնար ո՛վ չի դողար և սարսափիր այն ֆրիստոսէն որ հիմա պիտի ըսէ ո՛վ գարշելի մեղաւորներ ես ձեզի համար աշխարհք եկայ բժիշկ եղայ որ դուք հիւանդ էիք բայց որ մը չեկաք ինձի և ձեր ցաւերը չը ցուցուցիք և ինձի չաղաչեցիք որ ես ձրիաբար դեղ պիտի ընէի ձեզի հովիւ եղայ և անուննիդ կանչեցի բայց դուք իմ ձայնս չլսեցիք և իմ հօտիս մէջը չեկաք աղբատ եղայ չը նայեցաք օտար եղայ տուն չը փարիք և այլն ահա հիմա գացէք յաւիտենական տանջանքին մէջ հոն թող ըլլայ լալ և ակումսնիդ կըծըռցնել :

Ո՛վ ֆրիստոսեայ եղբայրներ մենք ալ չը վախնա՞նք այս սոսկալի ձայնէն . չէ՞ որ Սուրբ գիրքն ալ կըսէ թէ ահա ժամանակ ահա որ փրկութեան ո՛վ որ ահանջ ունի թող լսէ . վասն զի ես հաւատացեալներուն հետ կը խօսիմ ո՛վ որ կը հաւատայ թէ Աստուած կայ , հոգի կայ յարութիւն կայ դատաստան կայ թող արթննայ իրեն պարտքը ճանչնալու և վճարելու որ ձախակողմեան սոսկալի խօսքերէն ազատ ըլլայ և աջակողմեան օրհնեալ խօսքերուն արժանի ըլլայ որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից ամէն :

Եւ հիմա իմ ընկերներուս երկրացիներուս և բոլոր ծանօթներուս հետ կը խօսիմ որ շատ անգամ կը լսեմ զիս կը բամբասեն թէ բողոքական է կամ ինքզինքը Սուրբի տեղ է գրեր միթէ մենք չի՞տանք իրեն

գործած մեղքերը և այլն սիրելիք ֆրիստոս մեղայ ըսող և զըջացող մեղաւորներուն ներեց . ուրեմն դուք ինձի չէք ներէր . Պօղոս առաքեալ եկեղեցիին մէկուն կը գրէ թէ ատեն մը դուք ալ պիղծ էիք բայց սրբուեցաք բայց մաքրուեցաք . իրաւ ես սրբուած և մաքրուած չեմ սակայն շնորհիւն Յիսուսի ջանք կընեմ սրբուելու և մաքրուելու քանի որ շատ մեղաւորներ և շատ պիղծեր սրբուեր են և մաքրուեր են հապա մենք ի՞նչու պիտի չը սրբուինք . առաքեալները եկան ֆրիստոսի ըսին թէ մէկը տեսանք որ քու անունովը դեւեր կը հանէր արգիլեցինք անիկայ , ֆրիստոս ըսաւ թէ մի արգիլէք վասն զի ո՛վ որ մեր կողմը կը խօսի մեզի հակառակ չի կրնայ ըլլայ . ուրեմն սիրելիք ֆրիստոս զիս չի արգիլէր դուք ի՞նչու համար կարգիլէք քանի որ ֆրիստոսի կողմը կը խօսիմ . Պօղոս առաքեալ կը գրէ թէ ինչու համար խարդախութիւն ընկեր է մէջերնիդ մէկը կըսէք ես Պօղոս եմ Ապօղոսեան և միւսը Կէրասեան և այլն Պօղոսը ո՛վ է Ապօղոսը ո՛վ է խարութիւն չըկայ ֆրիստոսով ամէնդ ալ մի էք . Օհաննէս առաքեալ կը գրէ թէ ո՛վ որ ֆրիստոս մարմնով եկած կը խոստովանի իբրեւ եղբայր ընդունեցէք և այլն Սուրբ գրքին խօսքին նայելով իբրեւ եղբայր կընդունիմ . ուրեմն ինչու համար կը սիրէք Յոյները և Գաթօլիկները և չափէն աւելի պատիւ կուտաք անանկ պատիւ մը որն որ ինքզինքնիդ պատիկցնել ցոյց կուտաք անոնց առջեւ , անանկ պատիւ մը որն որ շատ անգամ ձեր Հայ ըլլալը

չէք ուզեր անոնց գիտցնել. որ ասանկով ձեր պատիւը կը կտորէք. մանաւանդ Պոյսեցիները որ զաւակ կը ծնանինն Յոյնի կաթ կը կերցնեն. և այն կաթը տղայոց բոլոր ջիզերուն մէջը կը տարածուի մինչև վերջը Յոյն կը հռտի. թէ և անուննին Հայ է բայց հոգիով Յոյն են վասն զի Յոյնը աւելի կը սիրեն իրենց ազգէն. և առաջի լեզուն Յունարէն կը սորվեցնեն իրենց տղայոց, աւաղ որ դուք ձեր ստակովը ձեր լեզուն և ձեր անունը կը պախարակէք. ձեր ազգին հոգ չէք տանիր և առաջ չէք քաշեր ու օգնութիւն չէք ըներ. ասանկով է որ ուրիշ ազգի քով պատիւ չենք ունենար. իրաւ այս մասին շատ բան ունէի գրելիք. բայց այս չափս բաւական սեպեցի. վասն զի վստահ եմ որ հետագործիրն շատ բան պիտի հասկնան ասկէ ևայլն:

կը սիրեմ բողոքականները երկու բանով. առաջինը այս է որ ճիշդ իմ լեզուս կը խօսին. իրաւ Հայերէն լեզու խօսիլը ձեզի բան մը չերեւար բայց ինծի շատ և շատ սէր և փափաք կուտայ, և Հռուստաղաւան հայերն ալ որ Հայերէն լեզու չեն ուզեր խօսիլ շատ և շատ ցաւ կ'զգամ վասն զի ուրիշ հոգիով է որ չեն ուզեր խօսիլ. երկրորդ սիրելուս պատճառը աս է որ աշխարհաբառ Սուրբ գիրք կարգալով շատ հոգեւոր բաներ սորվեցայ. հարցնեմ ձեզի սիրելիք դուք ինչէն գիտէք որ աշխարհքը Աստուած է ստեղծեր կամ քրիստոս եկաւ աշխարհ պըտեց կամ վերջին օրը դատաստան կայ ևայլն ըսել է որ կամ Սուրբ գիրք կարդացեր էք կամ կար-

դացողէն լսեր էք. ուրեմն իմ կարդալս ինչու համար ամօթ կը սեպէք. ահա կը համարձակիմ ըսելու թէ ոչ դուք կը լսնաք և ոչ ալ ուրիշը թող կուտաք. բայց պիտի ըսէք թէ մեր դրաբառ Աւետարանը կարդայ. արդէն ես յառաջաբանին մէջ իմ տգէտ ըլլալ խոստովաներ եմ, չեմ կրնար հասկնալ. չէ որ Պօղոս առաքեալ կը գրէ թէ երբ ձեր մէջը գամ և ուրիշ լեզուով խօսիմ բարբարոս մը եղած կըլլամ ձեզի. իրաւ թէոր ճիշդ Պօղոս առաքեալ հիմակ դայ մեր մէջ քարոզէ. բայց Յոյներուն մէջը Հայերէն քարոզէ որ բնաւ չը հասկնան, կամ Հայերուն մէջը Յունարէն և ըն. քանի որ չեն հասկնար ինչ օգուտ կունենան մտիկ ընողները. ուրեմն սիրելի եղբայրներս ահա իմ եղբայրական խրատս աս ըլլայ ձեզի որ նախ Աստուծոյ վախը խնդրեցէք ձեր սրտին մէջ և բարին ու չարը որոշեցէք և Աստուծոյ ճշմարտութիւնը ճանչցէք. վասն զի Ս. Գրիգոր Լուսաւորիչ ասանկով մեր Ազգը լուսաւորեց. երբոր ըսեր թէ հայրս ինչ ճամբայ գնացեր է ես ալ ան ճամբան կերթամ. ան ատեն ոչ ինք կը լուսաւորուէր և ոչ ալ մեր Ազգը կըրնար լուսաւորել. Յովհաննու Ե. Գլ. 39 Հմբ. Յիսուս կըսէ թէ գիրքերը քննեցէք, ինչու որ դուք անոնց մով պիտի ճանչնաք յաւիտենական կեանքը. և բուն անոնք են որ ինծի համար կը վկայեն. սիրելիք ըսել է որ մեր ամենուս ալ պարտքն է որ Ս. Գիրք կարդանք և քննենք. բայց ինտոր կարդալու և քննելու ենք. չէ թէ ուրիշ պատմութիւններու պէս ժամա-

նակ անցնելու համար. հապա ինչպէս որ հօրմէդ ունեցած խիստ ծանրագին մարգարիտ մը կորսնցուցեր ես (որ քու կեանքդ է) և անանկ կը յուսաս որ Ս. Գրքին մէջը կրնաս գտնալ. արդեօք որչափ կը փափաքես գիշեր ցերէկ բանդ գործդ թող տալով կը փնտռես նոյն մարգարիտը. քանի որ աղէկ գիտես եթէ գտնալու ըլլաս, ալ ուրիշ բանի կարօտութիւն պիտի չունենաս յաւիտեանս յաւիտենից. ահա հիմայ ես այս մտքով և այս սիրով կը քննեմ Ս. Գիրքը. Պօղոս առաքեալ կը գրէ. Բ. Տիմոթէոսի Գ. 15—16. քու մանկութենէդ ի վեր Ս. Գրքերը գիտես որ կըրնան քեզ իմաստուն ընել փրկուելու համար: Բոլոր Ս. Գրքերը Աստուծոյ շունչն է և ամեն ուսանողաց խիստ օգտակար. սիրելիք ես փրկութիւն փնտռողներուն հետ կխօսիմ, որ փրկութիւնը առանց Ս. Գիրք կարգալու չկրնար ըլլալ. առաքեալները և մարգարէներն հաւատացողին և ընդունողին հետ կխօսիմ, որ անոնք ընդունողը Ս. Գիրք պիտի կարդայ, չար և բարին որոշէ. ահա առաքեալք և մարգարէք բարի գործքերու համար այսպէս կը գրեն. միայն վկայութիւն կը գրեմ, բացէք կարդացէք. Յակոբու 17. Փիլիպպեցի 11. Յօհաննու ԺԵ. 4—5. Եփեսացիս Բ. 10. առաջին Տիմոթէոս 2. 18. Տիտոսի 8—14. Թեսսաղոնիկեցիս Բ. 16. Կողոսացիս Ա. 10. Երկրորդ Կորնթացիս Թ. 8. Յակոբու Գ. 13. Եփրայեցիս Ժ. 24. Յովհաննու Գ. 21. Յայտնութեան ԺԴ. 13. Տիտոս Բ. 7. Յակոբու Ա. 25. ահա այս համարները եթէ

կարդաք բարի մարդոց բարեկամ եղէք և անոնց պէս ըլլալու փափաք ունեցէք. ուրեմն սիրելիք ես առաքեալին խօսքին նայելով բարի մարդը կը սիրեմ և բարի գործքերու կը փափաքիմ, սակայն դուք կըսէք թէ բողոքական է և բողոքականները կը սիրէ. և ես ալ չուրանալով ճշմարիտը խոստովանեցայ թէ կը սիրեմ բայց բարիները. վասն զի Սուրբ գիրքը ինձի անանկ կը սորվեցնէ թէ Յոյն ըլլայ, Հռոմէական ըլլայ, Հայ ըլլայ, բարիները որոշէ և սիրէ ինչու որ ով որ Քրիստոս կը հաւատայ խտրութիւն չըկայ մէջերնիդ ամենդ ալ եղբայր էք, բայց Քրիստոս ըսաւ թէ բազումք են կոչեցեալ սակաւ են ընտրեալ. իրաւքրիստոնեայ շատ կան բայց բարի պատու ունեցողները Քրիստոսի ծառան են եղբայրն են և բարեկամն են կըսէ առաքեալը. ով Քրիստոսի ծառաներ նայինք թէ չարերուն համար ինչ կըսէ Սուրբ գիրքը յայտնութեան ԻԱ. 8 Եփեսացիս Գ. 18 Կողոսացիս Ա. 21 Ղուկաս ԻԲ. 65 Յայտնութեան ԺԶ. 9 Երկրորդ Կորնթացուց Գ. 4 Սաղմոս Ժ. 3 ԽԹ. 6 Միքիայ Բ. 2 Հռոմայեցուց Ա. 29 Սաղմոս Ե. 6 Առակաց Բ. 14 Երկրորդ օրինաց ԼԲ. 6 Սաղմոս Ե. 5 Յօբ Ը. 13 Սաղմոս ԼԼ. 21 Միքիայ 2. 11 Եսայեայ ԾԷ. 17 Փիլիպպեցիս Գ. 19 Հռոմայեցուց Բ. 7 Կողոսացուց Ա. 21 Եսայ ԻԹ. 13 Երկրորդ Տիմոթէոս Գ. 5 Ովսիայ Գ. 11 Երկրորդ Թեսսաղոնիկեցիս Ա. 8 Եզեկիայ Բ. 4 Սաղմոս Ժ. 4 ԺԴ. 1 Առակաց ԺԳ. 5 Սաղմոս ԾԸ. 3—ԿԲ. 4 Եսայեայ ԻԹ. 4 Յօբ ԻԱ. 15 Սաղմոս ԾԳ.

4 և ԾԹ. 12 և 1Է. 15 այս համարները եթէ մտադրութեամբ կարգաք իրենց պատուհներէն կրնաք ճանչնար, և առաքեալները պատուէր կուտան թէ ասանկ չարերէն հեռու կեցէք բարեւ մի տաք և հետերնին հաց ալ մի ուտէք (սիրելիք եթէ բարիներուն. եթէ չարերուն ամեն վկայութիւնը գրելու ըլլայի. միայն վկայութիւնները տեարակ մը կըլար) ուրեմն սիրելիք առաքեալը կըսէ թէ ասանկ չար պատու ուռեցողները սատանային ծառան են. որ սատանային նշանները կը գործեն ասանկներէն հեռու կեցէք կըսէ, չը մոռնանք ըսելու թէ առաքեալը մեզ կը խրատէ և պատուէր կուտայ ըսելով թէ ասանկ չար պատու ուռեցողները խրատեցէք քանի մը անգամ. եթէ մտիկ չընեն և իրենց չար ճամբայէն ետ չը դառնան, ան ատեն ձեզի Հեթանոսի պէս թող ըլլան. թէ և քրիստոնեայ են. բայց քրիստոսի նշանները չունին իրենց վրայ անոր համար քրիստոս պիտի ըսէ ձեզ չեմ ճանչնար, ով սիրելի ընկերներ և բարեկամներ չը գիտնաք թէ այս խօսքերը որ ձեզի գրեցի իմ գիտութիւնս ձեզի յայտնելու համար է ոչ ոչ հապա ձեզ ամէցնելու համար գրեցի ատեն մը ես ալ ատ չար սատանային նշանները ունէի վրաս. բայց ան ատեն դուք զիս կը սիրէիք կը պատուէիք հիմակ որ աւետարան կը կարդամ պաղ երես կը ցուցնէք և ետ ետ կը փախչիք և շատ անգամ ալ լսած եմ որ հայհոյեր են կարդացած գիրքիս մէջ. որ ձեր սիրած և ընդունած քրիստոսի խօսքերն է. և առաքեալնե-

րուն տուած պատուէրները ու խրատներն է. աւաղ աւաղ զի ոչ գիտէք զինչ գործէք. Հրէայները շուրթեան մէջ բռնուած կին մը բերին քրիստոսի և ըսին թէ Մովսէս մեզի պատուիրեց որ ասանկները քարկոծենք դուն ի՞նչ կըսես. քրիստոս մատովը գըրեց գետինին վրայ և անոնց ըսաւ թէ ձեր մէջ ով որ մեզը չունի, ան թող զարնէ քարը. ան ատեն ամենն ալ ձայն չհանելով՝ թողուցին գացին, ինչու որ ցիսուսին գրած ատենը ամենուն գործած մեղքերը իրենց երեւեցան. ուրեմն, սիրելիք, ցիսուս ձեր մեղքերը արդեօք չի՞ գրեր. կամ դուք մեղք չունիք որ զիս կը քարկոծէք. ես յիմար, դուք իմաստուն. ես տկար, դուք զօրեղ. ես աղքատ, դուք հարուստ. ես ի.քուն, դուք արթուն. ես անհաւատ, դուք հաւատացեալ. բայց աղէկ գիտցէք որ մինակ անունով քրիստոնեայ չըլար. հապա, քրիստոսի նշաններն ալ ունենալու է :

Քրիստոս ըսաւ, թէ ճշմարիտ ճշմարիտ մինչև որ մէկ մարդ մը նորէն չը ծնանի Ս. Հոգիէն չը ծնանի Աստուծոյ թագաւորութիւնը չի կրնար տեսնալ. մենք որը քանի քանի անգամ Հայր մեր ըսելով Աստուծոյ կրսենք թէ քու թագաւորութիւնդ գայ. քրիստոս կը պօռայ կը կանչէ թէ մինչև որ վերստին չը ծնանիք Ս. Հոգիէն չը ծնանիր Աստուծոյ թագաւորութիւնը չէք կրնար տեսնալ. մենք անոր ըսածը չենք լսեր և մտիկ չենք ըներ (արդեօք ի՞նչ է աս նորէն ծնանիլը Ս. Հոգիէն ծնանիլը) ականջ չենք դներ անոր զուրցածին. նո-

րէն կատիպենք թէ քու թագաւորութիւնդ գայ : Սիրելիք անոր թագաւորութիւնը լուսոյ թագաւորութիւն է . խաւար տեղը չի գար , ան արդար և ճշմարիտ է . սուտ և խարդախ տեղը չի գար , ան ողորմած է , անողորմ տեղը չի գար . ան իմաստուն և զօրեղ է , յիմար և տկար տեղը չի գար . ան հեղ և պարկեշտ սիրող է , հպարտ տեղերը չի գար . ան օրէնք և պատուիրանքներու տէր է , իրեն օրէնքները չը ճանչցողին չի գար . ան ճշմարիտ հովիւ է , մոլորեալներուն չի գար . վասն զի մէկ անգամ եկաւ մոլորեալները շարկեց բերաւ շիտակ ճամբուն վրայ և պատուէր տուաւ թէ իմ ճամբաներս ասոնք են , աս ճամբաներէն դուրս մի ելլաք . և աշակերտներուն ալ պատուէր տուաւ թէ ով որ տեսնաք հրաւիրեցէք Մատթէոս ի.թ. 9 . ուրեմն սիրելիք մեզ ամենա ալ կը հրաւիրէ . չերթանք մտիկ չընենք Յիսուսի և իրեն աշակերտներուն . երբոր չերթանք և մտիկ չընենք անոնց , հապա ինտոր ըսենք թէ քրիստոս կը հաւատանք . չէ որ քրիստոս ինքը կըսէ ինչո՞ւ համար ինձի տէր տէր կը կանչէք , և ինչ որ կըսեմ չէք ըներ . ըսել է որ թագաւորութիւնդ գայ ըսելով չըլլար , տէր տէր կանչելով ալ չըլլար , հապա ինչ որ ըսեր է ան ընենք . արդեօք ի՞նչ է ըսեր որ չենք ըներ . կըսէ թէ մինչև որ նորէն չը ծնանիք Ս . Հոգիէն չը ծնանիք Ստուծոյ թագաւորութիւնը չէք տեսնար , ինչու որ մարմինէն ծնածը մարմին է , հոգիէն ծնածը հոգիէ իրաւ սիրելիք այս խօսքը դժուար խօսք մըն է , վասն զի նի-

կողիմն ալ զարմացաւ , ինչու որ հնար բան չէ մարդնորէն ծնանի . բնաբանին մէջ ըսինք թէ մեղքով չը գինովցած մարդ մը չի կայ . մեղքով չի գինովցած մարդ մը չի կայ բայց արթննալու է քունէն և թափուելու է գինին . վասն զի մարդ մը երբոր աշխարհային ամեն կերպ մեղքերու հետեւած ատենը նոյն մեղքովը գինովցած է , անոր համար իրեն ըրածը իրեն յանցանք չերեւար , պակասութիւն չերեւար , մեղք չերեւար , ո՞չ Ստուծմէ կը վախնայ , և ոչ մարդերէն կամաչէ . և շատ անգամ ալ ասոր անոր կը պարծենայ թէ ասանկ ըրի , կամ անանկ ըրի : Ըսել է որ իրաւ գինով է . որովհետեւ եթէ գինով չըլլար , ապա իրեն գործած մեղքը ուրիշին առջև չէր պարծենար . բայց երբոր գինին թափեց և քունէն արթնցաւ , ան ատեն իրեն ամեն ըրած բաները աչքին առջև կուգայ , յանցանք և պակասութիւն կերեւայ իրեն , այն ատեն կսկսի վախնալ Ստուծմէ և ամաչել մարդերէ . և այն մարդուն՝ որ պարծնցեր էր , անկէ ալ խիստ կը վախնայ , ըսելով թէ մի գուցէ և նա այլոց ըսած ըլլայ . և այսպէսով գիշեր ցերեկ կը գղջայ կողբայ , արցունք կը թափէ ու կը նայի կը տեսնայ որ ինք մոլորեր է . կսկսի իւր հոգեւոր հովիւը փնտռել . կը նայի որ ինք հիւանդ է , կսկսի իւր հոգեւոր բժիշկը փնտռել . կը նայի որ ինք մինչև այն ատեն չար սատանային կամքն է կատարէր , կսկսի իրեն երկնաւոր հօրը կամքը կատարելու : Ս.յն ատեն բնութիւնը կը փոխուի և իւր առջի ընկերներուն ու-

րիչ տեսակ մի կերեւայ . ինչու որ առաջ հպարտ էր .
բայց հիմա , կտորած սիրտ և խոնարհ հոգի է . առաջ
չատ բաներ կրնէր և իրենց ըրածին ալ կամք
կուտար . բայց հիմա , ոչ կրնէ և ոչ ալ կամք կու-
տայ : Ասոր համար կսկսին անոր վրայ ծիծաղել թէ
խեղքը կորսնցուցեր է և տեսակ տեսակ կանոն կը
կրցեն մարդուն վրայ :

Ահա սիրելիք Բրիտանոս որ քառ նորէն ծնանիլ
հոգիէ ծնանիլ ճիշդ մարդուս բնութեան համար ը-
սաւ . որ մինչև ասանկ չը փոխվի Աստուծոյ թագա-
ւորութիւնը չի տեսնար . Հայր մերին մեկալ խօսքը
կրսենք թէ եղիցի կամք քո . սիրելիք օրը քանի մը
անգամ այս խօսքը կառաջարկենք Աստուծոյ թէ քու
կամքդ ըլլայ . բայց Աստուած կըսէ թէ օրը հազար
անգամ ալ զուրցէք օգուտ մը չունի . հասկա թէ որ
իմ կամքը ըլլալ կուզէք Ս. Գիրքը կարդացէք հասկը-
ցէք և կատարեցէք . ինչու որ իմ կամքս անոր մէջը
գրուած են . ահա ամեն բան ալ նմանապէս խօսելով
չըլլար , հասկա կատարելէն . ուրեմն սիրելիք թէ որ
մեր հայրենիքէն գիր մը առած ըլլանք , կարդացած
ատեննիս եթէ եզրայրնիս է գրեր անոր միտքը կը
հասկնանք . եթէ հայրենիս է գրեր անոր միտքը կը
հասկնանք . իբր թէ կարդացած ատեննիս անոնց
հետ կը խօսինք և կը հասկնանք թէ ի՞նչ են ուզեր
մեզմէ որ խրկենք . եթէ սիրելիին անմիջապէս անոնց
խնդրածը կատարենք հնարաւոր բան է որ գեղէն
մարդ եկեր ըսելով , ամենասիրելի հօրս գիրքը չը բա-

նամ չը կարդամ և հօրս միտքը չը հասկնամ . հասկա
ըսեմ թէ այն եկող մարդուն հարցնեմ , ի՞նչ պէտք է
դիրը կարդալ . սիրելիք եթէ գիրը կարդանք , մեր
հօրը հետ կը խօսինք և միտքը կը հասկնանք . եթէ
մարդուն հարցնենք , մարդուն հետ կը խօսինք . վա-
սըն զի կարելի է մարդը աւելի կամ պակաս բան կը
զուրցէ , քանի որ սխալական է . կամ մոռցած կըլ-
լայ , պակաս կը զուրցէ . կամ թշնամի է , շատ աւելի
բաներ կը զուրցէ քեզի . կամ սխալմամբ ուրիշին զը-
րուցած խօսքը քեզի կը զրուցէ և քուկդ ալ ուրիշին :
Անանկ է նէ սիրելիք մենք մեր հօրը կամ եղբօրը
խրկած գիրը կարդանք և անոնց միտքը հասկնանք .
քանի որ կարդացած ատեննիս անոնց հետ կը խօ-
սինք . ասանկ ալ Ս. Գիրքը կարդացողը Բրիտանոսի և
իրեն առաքեալներուն հետ կը խօսի և անոնց միտքը
կը հասկնայ . ուրեմն չը կարդանք Ս. Գիրքը , Բրիտ-
անոսի և իրեն առաքեալներուն հետ չը խօսինք և
անոնց միտքը չը հասկնանք որ կամքերնին կատա-
րենք . եթէ չընենք , ի՞նչ օգուտ կըլլայ քու թագա-
ւորութիւնը դայ և քու կամքդ ըլլայ ըսելով . չէ՞ որ
անօթի մարդու մը գնայ , հաց կեր ըսելով չըլլար .
հազար օտակ տալու է ելն . սիրելիք ինչպէս որ ա-
նունով քրիստոսնութիւն չըլլար , անանկ ալ անունով
հայութիւն չըլլար . հասկա Հայ անուն կրողը քաջն
վարդանայ հոգին ունենալու է . բայց գուք ինձի
կրտէք Բողոքական է հոգ չէ . ինձի համար կարծեմ
չատերը ատանկ կտեսնէն խնայով , Բողոքական ես ը-

սերով մեր եկեղեցիին ծոցէն հանեցիք. վասն զի մարդու մը 10—20 հոգի կայր կայր ըսեն, արդէն կայր կըլլայ. անշուշտ ես արդէն պղտիկութենէս ի վեր եթէ փօշաները Գրիստոսի խօսքը ընեն, կերթամ քովերնին մտիկ կընեմ. չէ թէ փօշա ըլլալու համար կերթամ քովերնին, հապա բան մը սորովելու համար (ինչպէս որ սորվեցայ) եթէ չուրանաք աղէկ գիտէք որ դպրոց և վարժապետ տեսած չեմ. ըսել է որ աշխարհաբար կարդալէս առաջ եկաւ այս դրածնե-
 ըրս. սիրելիք ճշմարտաբար խոստովանելով, երեք անգամ երկիրը գացեր եմ ժողովարան և մէկ անգամ մըն ալ Պօլիս. բայց աւելի հետաքրքիր եղայ և սէր տուի Ս. Գրքին որ կարդալով հոգեւոր բաներ սոր-
 վեցայ, և շատէն քիչ ձեզի ալ բացատրեցի. ով որ ահանջ ունի թող լսէ:

Ուրեմն սիրելիք չէք ուզէր հոգեւոր բաներ սոր-
 վիլ. կամ Ս. Գիրք կարդալով Աստուծոյ հետ խօսիլ, իրեն կամքը հասկնալ. երբոր չէք ուզէր հապա ինչո՞ւ ամեն օր եղիցի կամք քո կըսէք և ինչ. մարդարէն ները և առաքեալները կը հաւատանք և կընդունինք ըսելով ինչ օգուտ կուեննանք. քանի որ իրենց կամքը չենք սորվիր և չենք կատարէր. չէք գիտէր որ եթէ խելքս Գրիստոսի կամքին և պատուէրին տալու չըլլայի, չէի կրնար այս հոգեւոր խօսքերը գրելու. անանկ է նէ ինչո՞ւ համար կարգիլէք զիս Ս. Գիրքը կարդալէն. սիրելիք քանի որ Ս. Գիրք կարդալու հետեւեր եմ, եթէ գրութա մարմնաւոր փոր-

ձանք մը գալու ըլլայ, անոր մէջը հոգեւոր բաներ շատ կը սորվիմ, որն որ հիմա ձեզի բացատրեմ պիտի: Սշխարհիս մէջ մարդ կայ՝ նեղութեան ատենը խիստ ծանր քուն մը կը խոխէ վրան, որն որ քնանալէն չի կշտանար. ինչպէս որ առաքեալները Գրիստոսի մատնուած ատենը քնանալէն չէին կշտանար. մարդ ալ կայ՝ որ նեղութեան ատենը ամենեւին քուն չի գար, հապա լայն և արձակ ուրախ և զուարթ եղած ատենը չի կշտանար. ասանկ ալ մեղքի կողմէ կան մարդիկ՝ որ նեղութեան ատենը մեղք կը գործեն. ինչպէս որ գործեց Պետրոս առաքեալ Գրիստոսի չարչարուած ատենը ուրանալով Գրիստոս. բայց ասանկ նեղութեան ատեն մեղք գործելը պատահմունք կըսուի. ինչու որ նոյն մեղքը գործելու մտքով չը գնաց Գրիստոսի հետ. հապա գնաց որ բանին վերջը տեսնայ թէ Հրէայք Գրիստոսի ինչ պիտի ընեն. բայց հոն նեղութեան մէջ մնաց իր նեղութեան համար ուրացաւ որ դոնէ ինք ազատի. իրաւ Պետրոսին համար մեծ մեղք էր իրեն տէրը ուրանալ. բայց պարագան անանկ ներեց. անոր համար Պետրոս զղջալուն պէս ներուեցաւ իրեն մեղքը. բայց Յուդայ որ մատնեց Յիսուս լայն և արձակ ատենը բրաւ և առաջուրնէ միտքը դրաւ նոյն մեղքը գործելու. Յիսուսի քովէն որ ելաւ գնաց իսկ նոյն մեղքը գործելու համար գնաց, ասոր համար ներում չեղաւ չէ որ Յուդայ ալ զղջաց և լացաւ կըսէ Աւետարանը. բայց ներում չեղաւ. ասանկ ալ մենք սի-

րելիք եթէ մեղք մը պատահամաք ըլլայ շուտով նե-
 րում կը գտնանք . եթէ մեղք մը գործելու համար
 առաջու ընէ մտքերնիս դնենք և ժամը կամ երկու
 ժամ ճամբայ երթանք նոյն մեղքը գործելու . խիստ
 շատ լաց և աղաղակ պէտք է վասն զի դժուար նե-
 րում կըլլայ . Աւետարան կարդալէս ի վեր ծառայու-
 թեան ատենս ալ շատ բան սորվեցայ . երկու ամիսի
 չափ հիւանդութիւն քաշեցի օրը քանի մը բարեկամ
 տեսութեան կուգային քովս . բայց որն որ իմ կարօ-
 տութիւնս կը հոգար անոր գալը ինծի ընդունակ կըլ-
 լար (կամ դեղ կը քսէր կամ դեղ կերէր կամ կրակ կը
 շինէր և այլն) . կը խորհէի և ինքրիենս կըսէի . եթէ
 ես ալ հիւանդի կամ բանտարկեալի մը օրը 10 ան-
 գամ երթամ և կարօտութիւնը չը հոգամ ոչինչ կըլ-
 լայ երթալ . երբ մարմնաւոր տէրօղմէս բան մը կը
 խնդրէի կամ հիւանդ ատենս սերիչ բան ձմեռը ու-
 ղիչ և ամառը ուրիչ, սիրելիք արդէն աղօթք ըսած
 բանը Աստուծմէ բան մը խնդրել է . բայց նեղու-
 թեան ատեն իրեն համեմատ աղօթք ընելու է . մեղ-
 քի ատեն իրեն համեմատ, ճանապարհի ատեն իրեն
 համեմատ, հիւանդ ատեն համեմատ և այլն եթէ ու-
 ըրախութեան համար հրաման առնելով տեղ մը եր-
 թայի այն զուարճութեանս ատենը ըսողութիւնս
 ինծի իմաց կուտար թէ այս ուրախութիւնը մարմնա-
 ւոր տէրօղը շնորհիւն է որ կընես . այն ատեն արտօ-
 ղալով տուն կերթայի և պարտքօ չեղած գործ մը
 գտնալով կընէի, իբր թէ իմ շնորհակալութիւնս կը

ցուցնէի . և մարմնաւոր տէրս ալ վրաս նայելով ու-
 ըրախութիւն մը կուգար և ամեն կարօտութիւնս կը
 հոգար . սիրելիք ըսել է որ եթէ մենք ալ ամեն ա-
 տեն մեր շնորհակալութիւնը տանք Աստուծոյ ան մեր
 սիրտը տեսնալով ամեն կարօտութիւննիս պիտի հո-
 գայ առանց ուղերու . օր մը ինծի անձնական գործ
 մը պատահեցաւ տունն ալ չէին որ հրաման առնէի .
 հարկը պահանջեց որ առանց հրամանի երթամ . վա-
 սըն զի վստահ ըլլալով երկու տարիի չափ է որ հոս
 եմ և առանց հրամանի բան մը չեմ ըրած . քայց եր-
 թայէս վերջը մարմնաւոր տէրս ըսած ին պէս խիստ
 կը բարկանայ վրաս և այն օրը ուրիշ խոհարար կա-
 պրարէ ասկէ երկու կերպ բան սորվեցայ . Ա. ժա-
 մանակով կարին փաշա մը կերթայ և կը հարցնէ մե-
 կուն թէ այսչափ փաշա կերթայ կուգայ որմէն խիստ
 գոհ էք . ան ալ կըսէ թէ այս ինչ տարին փաշա մը
 եկաւ կէս ժամ մնացած հոն մեռաւ անկէ խիստ գոհ
 ենք որ քաղաք չը հասաւ . հիմակ Պօլսոյ շատ հա-
 ըուստներուն հարցնես թէ այսչափ ատենէ որ ծառայ
 կը բանեցնես որմէն խիստ գոհ ես . ան ալ պիտի ը-
 սէ թէ այս ինչ տարին մէկը կեցաւ ըտլերնիս երեք
 շաբաթ կամ երեք ամիս անկէ խիստ գոհ ենք . ե-
 ղեք տարի կեցողէն գոհ չեն ըլլար . վասն զի շատ
 անգամ վորձած եմ որ նոր եկող ծառային պատիւ
 կուտան կարօտութիւնը կը հոգան և անոր վրայ կը
 տաքնան (բայց ամենը պատիւ չէ) աս ալ իրենց պա-
 տիւ չի բերէր որ շատ կեցող ծառային սիրտը ցաւ

ցրնեն : Բ. սորվածս , սիրելիք , չըլլայ թէ մենք ալ
 Աստուծոյ վրայ վստահ ըլլանք և առանց անոր հրա-
 մանին բան մը ընենք կամ մեղք գործենք և այն
 սորվածս երբ ուրիշ խոհարար ապրապրութեամբ ա-
 ղախիններն ալ սկսեցին զիս կոխկռտել (բայց ես բա-
 նին տեղեակ չըլլալով) թէ որ ես ալ բան մը ըսէի
 մեր կամքը ասանկ կուզէ կրսէին . կարճ խօսքով մին
 չեւ երկու տարեկան զանակին երեսէն ալ ինկայ
 ըսելէ որ եթէ Աստուծոյ դէմ պակասութիւն մը յան-
 ցանք մը գործելու ըլլանք . Աստուծոյ երեսէն ինա-
 շէն զկնի բոլոր հրեշտակներուն սուրբերուն երեսէն
 կկնանք . Գ. սորվածս մինչեւ հիմայ որ տուն ոչ
 աշխատէի գիտէի թէ իմ տունս է , բայց հիմայ այն
 պէս խորհեցայ որ , բոլոր դրսեցիներն ինչպէս պան-
 դուխտ էինք Պօլոյ մէջ (մեզի տուն չըլլար) այնպէ
 ալ ամեն ազգ և ամեն քրիստոնեայ պանդուխտ են :
 այս աշխարհիս մէջ մեզի տուն չըլլար , վասն զի մեզ
 բոլոր ազգականները և բարեկամները անդին են
 մենք ալ պիտի երթանք հոն , և ինչպէս որ մենք Պօ-
 լիս կուղանք քանի մը ստակ ճարելու ջանք կընենք
 որ երթանք մեր հայրենիքը երջանիկ ապրինք , անան
 ալ բոլոր մարդիկ պէտք է որ Սուրբ գրքին համե-
 մատ ջանք ընեն բարիք ընելու որ երթան յաւի-
 տենական կեանքը երջանիկ ապրին :
 Սիրելիք , արդէն ամեն մարդ ինչ արհեստի մէ-
 յո ըլլայ , իրեն շատ խօսքերը նոյն արհեստին վրայ
 կըլլայ , անանկ ալ ես ծառայ ըլլալով շատ խօսքեր

նոյն արհեստին վրայ ըրի . վասն զի ոչ ուրիշ արհես-
 տի մտած եմ և ոչ ալ կրնամ խօսիլ . ամեն մարդ
 մէկ մէկ գաղափարի տէր է , ես իմ գաղափարներս
 իմ սիրելի բարեկամներուս յայտնեցի և անանկ կը
 հաւատամ որ եթէ Ս. Գրքին համեմատ քայլեմ ինչ
 որ ըսէք ինձի համար հոգ չէ . վասն զի աս տեսրակս
 գրած ատենս շատերը ծաղր ըրին և խնդացին վրաս ,
 նորէն ինձի համար հոգ չէ . բայց զարմանալին հոս է
 որ , հազար անգամ եկեղեցի երթամ չէք տեսներ ,
 մէկ Բողոքականի մը հետ տեսութիւն ընեմ , ամեն
 քրդ ալ կը տեսնէք : Բնաբանիս մէջ ըսի թէ եթէ
 հօրմէդ մնացած ծանրագին մարդարիտ մը կորանցը-
 նես և շատ փնտռես և Յոյն մը կամ Հրեայ մը կամ
 Բողոքական մը լուր տայ աւետիս տայ քեզի թէ Ս.
 Գրքին մէջ է , արդեօք դուք պատիւ մը չէք ըներ
 աւետիս տուողին , դուք գիտէք եղբայրներ թէ ես
 Հայ ծնած եմ և Հայոց եկեղեցւոյն ծոցը մեծցած եմ ,
 եթէ դուք ալ նոյն սիրովն էք , եկէք միատեղ եր-
 թանք Անի քաղաք՝ և գլուխնիս այն վաղեմի աւե-
 րակներուն վրայ , այն նուիրական քարերուն զարնե-
 լով ըսենք Աստուծոյ թէ ինչ ապերախտ և թշուառ
 Ժողովուրդ ենք մենք որ այս հոյակապ և փառաւոր
 շէնքերն մեր հայրենի երկիրն Հայաստան խնցիր ա-
 ուիր մեր ձեռքէն օտարաց տուիր զայն . որոնք պիղծ
 ձեռքերով այդ նուիրական քարերն կշօջափեն և նո-
 ցա անմաքուր ոտքերն զանոնք կը կոխկռտեն , իրենց
 վատ ոգիներն անոյշ հողմերն կծրծեն և իրենց ծա-

րաւը իւր քաղցր շուրերովն կյադեցնեն : Յաւալի է մեր վիճակն , եղբարք իմ , եկէք միանանք , երթանք այն տեղը ուր քաջն վարդան իւր ընկերներովն այնչափ արիւն թափեց , և քիչ մ'ալ մեր արցունքն երովն թրջենք այդ տեղերը , պտտինք այն դաշտերը ուր մեր նախնիքն սիրած են , խմենք իւր շուրերն և ծծենք քաղցր օդն :

Եղբարք , պանդուխտի մը սիրտն է այս գիրքն , կարդացէք զայն և պիտի տեսնէք հոն նորա անթիւ խոցերն որ միշտ օր աւուր աւելնալու վրայ են , ով որ կարող է , թող փութայ այդ վէրքերուն դեղ մը տալ :

Այդ սիրտը այսչափէն աւելի չկրնալով խօսիլ , սա վերջին խօսքը կարտասանէ . և ով որ ահանջ ունի թող լսէ . թէ միշտ հաւատարութիւն սիրենք , գործերու մէջ ուղղութիւնն և ճշմարտութիւնը ամեն բանէ բարձր բռնենք և միշտ սիրով և մտութեամբ ապրինք :

Վ Ե Ր Չ

Ա Ղ Օ Թ Բ

Ո՛վ Տէր , շնորհակալ եմ 'ի քէն որ դիս մահուան թմբութենէն և մեղաց խորին քունէն արթնցուցիր , և քու անթիւ բարեացդ արժանի ըրիր ինձ նման մեղապարտ ապերախտ մը . կազաչեմ Տէր Աստուած որ չըլլայ թէ այս գրքին մէջ յայտնած տկար գազափարներս ինձ համար մեղք համարես , վասն այս գրութիւններս քու շնորհօքդ և ողորմութեամբդ գըրեցի :

Ո՛վ Տէր , կազաչեմ որ ամեն բանէն առաջ քու վախդ իմ սրտիս մէջը դնես , որ ամեն ատեն արթուն կենամ և զգուշութեամբ կեանք անցնեմ . քեզի յուսամ և քու ողորմութեանդ ապաւինիմ . քեզնէ շնորհք ուզեմ ու քեզի ծառայ ըլլամ (չէ թէ սատանայի) քու խօսքիդ հնազանդիմ . և քու ճշմարտութիւնդ խրկէ իմ սրտիս մէջ որ ամեն ատեն քու ճշմարտութեան մէջ քալեմ :

Ո՛վ Տէր , ինչո՞ւ համար քու գանձատունիդ գըրները գոցեր ես մեր վրայ . այն բարիքները որ լեցուցեր ես քու գանձատունիդ մէջ որի՞ համար պահեր ես . արդեօք պիտի չի բանաս մեր վրայ որ մենք ալ վայելենք անոր բարիքներէն . բայց վայ ինձի , ի՞նչ կըսեմ , չէ՞ որ ինքը առաջուց խօսեցաւ թէ չը վընտրողը չպիտի դանէ և չը զարնողին չպիտի բացուի : կազաչեմ , ո՛վ Յիսուս , ահա ես այսօր կը փնտը-

ուեմ երեւցիր . անառակ եմ ընդունէ . մաքսաւոր եմ ներէ . աւազակ եմ յիշէ . և կը զարնեմ քու դուռներդ բաց ինծի . տուր բանալիները քու բարի հրեշտակին և խրկէ որ բանայ քու դանձատունիդ գրոները որ ամեն բարիքով լեցուած է . և ամեն բարիքներէն ուզածիս չափ թող տայ ինծի . վասն զի քիչի գոհ չեմ ըլլար . քանի որ աղէկ գիտեմ որչափ որ ալ շատ տայ նորէն բան մը չը պիտի պակսի :

Ասոր համար ո՛վ Տէր , կաղաչեմ որ ամեն բարիքներէդ առատ առատ տուր ինծի հեղուծիւն , պարկեշտութիւն , խոնարհութիւն , համբերութիւն . տուր ինծի հանդերձի պէս հագցուր ինծի . թուրի պէս կապէ մէջքս . թող չարն սատանան քու նշաններդ իմ վրաս տեսնալով հեռանայ ինձմէ . առ ինծի քու հօտիդ մէջը . ճանչցուր ինծի քու ձայնդ որ ես ալ ճանչնամ իմ հոգեւոր հովիւս . մարմնաւոր բանի մը պակասութիւն չունիմ . բայց հոգեւոր շատ պակասութիւն ունիմ և շատ ցաւեր ու պիտի թափեմ քու առջիդ . վասն զի իմ հոգեւոր բժիշկս դուն ես և ձրիաբար դեղ ու դարման ընողը դուն ես . ո՛վ փրկիչ , ո՛վ բժիշկ , կոյր եմ աչքերս բաց . բորոտ եմ զիս սրբէ . անդամալոյծ եմ աւողջացուր . մեղաւոր եմ արդարացուր . տուր ինծի կոտրած սիրտ մը և խոնար հոգի մը . ցուցիր ինծի քու պալատներդ , քու սենեակներդ , աթոռներդ և պսակներդ որ սիրելեացդ համար պատրաստեր ես . զօրացուր աչքիս քաղ որ աղէկ տեսնամ ատ բարիքները . աւելցուր

սրտիս փափաքը որ գիշեր ցերէկ փափաքիմ նոյն պարգեւները վայելելու . տուր ինծի ճշմարիտ հաւատք մը որ ամեն ատեն անոր մէջ քալեմ . ո՛վ Յիսուս փրկիչ մարմնաւոր ծառայ եմ , բայց քեզի ազատ եմ . ասոր համար գոհ եմ իմ ծառայութեանս լուծէն , որ շատ արդարութիւն կայ անոր մէջ . կաղաչեմ որ ինծի արդար սիրտ մը և միտք մը տաս որ ամեն ատեն արդարութեամբ վարուիմ . տուր որ հնազանդ ըլլամ իմ մարմնաւոր տէրոջս և բոլոր մեծերուս . վասն զի քու օրէնքդ և պատուէրդ է . տուր որ ամեն ատեն քու օրէնքիդ մէջ քալեմ բարի մարդոց սիրելի ըլլամ . և չար մարդիկ թող հեռանան ինձմէ . և անոնց ալ տուր որ չարութենէ հեռանան և բարիի մօտենան , քու օրէնքիդ փափաքին և անոր մէջը քալեն . կաղաչեմ ո՛վ Տէր բանտի մէջ եղողներուն և ծովի վրայ ալէկոծութեան բռնուողներուն , և լեռները ձիւնի և փոթորկի բռնուողներուն ողորմէ ազատէ անոնք քու գթութեամբդ . խրկէ քու բարի հրեշտակը որ անոնց օգնութեան հասնի . ինչպէս շատերուն հասեր է :

Այսարհիս հիւանդներուն , անառակներուն և մանաւանդ աղքատներուն նայէ , տես , դժայ , ողորմէ , փրկէ ազատէ , թող անոնք ալ քու շնորհքներդ վայելէն և քեզմով ուրախ ըլլան . անոնք և ես ալ անոնց հետ քեզ օրհնենք ինչպէս որ քեզի կը վախելէ օրհնութիւն այժմ և յաւիտեանս ամէն :

միտ նայեալսն ինչոք զմէր որ զգալիսն սխալ
աճ աղիւմն զմէր ինչոք զգալիսն զգալիսն

Ա Ղ Օ Թ Ք

Ո՛վ Տէր, ինչպէս որ ինձի համար աղաչեցի, անանկ
ալ հօրս և մօրս սիրելի եղբօրս և իր զաւակներուն
ու իմ զաւակներուս ալ տուր ամեն պարգեւներէդ,
պահէ քու թեւերուդ տակը. և բոլոր գերդաստա-
նիս ալ աչքերնին բաց թող քեզ ճանչնան քեզ օրհ-
նեն և քու արդարութեան մէջ քայլեն թող զխոնան
որ ամեն բան քուկը է. թէ կեանք, թէ իմաստու-
թիւն. թէ հարստութիւն եթէ ուզես կրնաս առնել.
ասոր համար թող արթուն կենան քեզմէ վախնան և
քեզի ապաւինին ու շնորհքներդ վայելեն:

Մարմնաւոր տէրերուս համար ալ կաղաչեմ, ուր
որ աշխատէր եմ ուր որ հացերնին կերած եմ և ըս-
տակնին առած եմ. անոնց ալ սրտերնին չը կտորեմ
իրենց և իրենց զաւակներուն ու բոլոր գերդաստա-
նին բոլոր օր և երկան կեանք շնորհես և քու պար-
քեւներդ թափես անոնց վրայ. ըստ անոնց սրտին
աչքը որ քու մեծութիւնդ և զօրութիւնդ տեսնան,
քու վախդ տպագրէ անոնց սրտին տախտակին վրայ,
որ անոնք ալ ամեն պտեն արթուն կենան և քեզի ա-
պաւինին և զխոնան թէ դուն ես բոլոր աշխարհք
ախրողը:

Տէր իմ ինչպէս որ դուն գթած ես աշխարհի վը-
րայ. կաղաչեմ որ այս աշխարհիս բոլոր թագաւոր-
ներուն կուսակալներուն դատաւորներուն ալ քաղցր

և գթած սիրտ մը տաս որ ամեն ատեն իրենց տե-
սած դատը գթութեամբ և ողորմութեամբ ըլլայ.
Ինչպէս որ քու դատաստաններդ արդար են. տուր
որ անոնք ալ որդարութեամբ նային ժողովրդեան,
և ինձի հետ տեսութիւն ընող եղբայրներուն. մա-
նաւանդ բոլոր հաւատացեալ եղբայրներուն համար
ալ. կաղաչեմ ինչ որ ինձի համար ինդրեցի. անոնց
ալ առատ առատ շնորհես քու անհատ պարգեւներ-
րէն. և բոլոր աշխարհի ժողովրդեան տուր հանգըս-
տութիւն սիրութիւն միութիւն, թող չարն սատանան
հեռանայ անոնցմէ. և քու նշանդ թող ըլլան անոնց
վրայ, ես և բոլոր հաւատացեալ ժողովուրդք քեզ
օրհնենք քեզ գովենք և քեզի վառաբանութիւն մա-
տուցանենք այժմ և յաւիտեանս ամէն:



ևս բժնից մեծա մեծա զո սառ զն ուրիս ծակի ք մ
 զայլոց զհարմել լուրդարս և զհարմել ուրիս զտարս ծա
 դաս . մեծ զոս զոս զսոցմեծաւասարս արց ոս սկզբնի
 . մեծ զոս զոս զսոցմեծաւասարս արց ոս սկզբնի
 ան . մեծ զոս զոս զսոցմեծաւասարս արց ոս սկզբնի
 զանաթ մեծ զոս զոս զսոցմեծաւասարս արց ոս սկզբնի
 բնում . զոս զոս զոս զսոցմեծաւասարս արց ոս սկզբնի
 ան . մեծ զոս զոս զսոցմեծաւասարս արց ոս սկզբնի
 զոս զոս զոս զսոցմեծաւասարս արց ոս սկզբնի
 մեծաւասարս մեծաւասարս զոս զոս զսոցմեծաւասարս արց ոս սկզբնի
 բնում մեծաւասարս զոս զոս զսոցմեծաւասարս արց ոս սկզբնի
 բնում զոս զոս զոս զսոցմեծաւասարս արց ոս սկզբնի
 ան մեծաւասարս զոս զոս զսոցմեծաւասարս արց ոս սկզբնի
 . մեծաւասարս զոս զոս զսոցմեծաւասարս արց ոս սկզբնի



2m

7327

2013

